





# Գ Ե Ր Ե Ջ Մ Ա Ն Ք

Ե Ր Ի Տ Ա Ս Ա Ր Գ Ա Ց

Կ Ա Մ

Տ Ռ Փ Ա Կ Ա Ն Հ Ի Ի Ա Ն Դ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

479

Ե Ի Ր Ո Պ Ի Ո Յ Ի Մ Ա Ս Տ Ա Ս Ի Ր Ա Ց Ա Ր Դ Ի Դ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն  
Հ Ա Մ Ե Մ Ա Տ

Ա Ր Մ Ե Ն Ա Կ Հ Ա Յ Կ Ո Ւ Ն Ի



Կ . Պ Օ Լ Ի Ս

Ա . Հ Ա Մ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Տ Պ Ա Ր Ա Ն

Ի Մ Ա Մ — Ա Ա Լ Ի Խ Ա Ն , Թ Ի Ի 15

— 1863 —

171


1803

and

of the

of the

of the



of the

of the

of the

1803

Ինչպէս որ ամեն ուրիշ ազգաց՝ նոյնպէս ալ մեր  
 ազգին երիտասարդաց մէջ, այս վերջին տարիներս  
 տուփական հիւանդութեանց, այսինքն Սերմնահատու-  
 թեան, Միզանցքաբորբոքման եւ Մաշողական ախտից  
 օրէ օր ամենաերագ կերպով կենասպառ ընթացքին  
 տեսնելովնիս եւ դիտելովնիս, ալ վայրկեան մը եւս  
 չուզելով յապաղել՝ ահաւասիկ գրքոյկ մը նուիրեցինք  
 Հայ երիտասարդութեան, զանոնք վերոյիշեալ զար-  
 հուրելի եւ միանգամայն զգուելի հիւանդութիւններէն  
 զգուշացնելու եւ կամ ազատելու համար, որոնց տը-  
 խուր հետեւանքներն անուրանալի են արդարեւ: Մարդ-  
 կային ընկերութեան անարժան մէկ անդամն է նա՛ որ  
 դիտէ յիշեալ չարեաց առջեւը առնելու միջոցները, եւ  
 լռիկ հանդիսական մը կը կանգնի իւր բոլորտիքը տեղի  
 ունեցած կոտորածներուն: Մարդկութիւնը եւ քրիս-  
 տոնէութիւնը միաբերան բողոքելու իրաւունք ունին  
 այնպիսի անձի մը դէմ, վասն զի այնպիսւոյն անհրա-  
 ժեշտ պարտաւորութիւնն է իւր ամեն կրցածը ընել,  
 եւ իւր ամեն տեղեկութիւնները հրատարակել, յօգուտ  
 մարդկային ընկերութեան. որոյ շնորհիւ ինքը կը վա-  
 յելէ ամեն տեսակ խաղաղութիւնք եւ երջանկութիւնք:

Իսկ մենք որ Եւրոպիոյ մեղուաջան հեղինակաց շը-  
 նորհիւ բաւական տեղեկութիւն ստացած եմք մարդ-  
 կային կազմութեան ամեն օրէնքներուն՝ եւ նորա են-  
 թակաց եղած ամեն թշուառութեանց եւ մանաւանդ  
 Տուփական հիւանդութեանց նորա վրայ ունեցած ահար-  
 կու ներգործութիւններուն վրայ, չէինք կրնար առանց  
 խղճմտանքնիս բթացնելու ձայն չի բարձրացնել բոլոր  
 այն Հայ երիտասարդներուն՝ որոնք անսկզ գառնուկ-

ներու նման ցատկուտելով եւ ուրախութեամբ իրենց դա-  
հի ճներուն ետեւէն կ'երթան եւ կը կորսուին :

Անմեղ երիտասարդութիւնը այսօր փրկարար ձեռ-  
քի մը կարօտ է , իմ սիրելի ընթերցողներս , ուստի նե-  
րէ՛ ինձ , կ'աղաչեմ , 'ի սէր Նայ երիտասարդութեան  
եւ մարդկութեան , երբոր այս գրքիս մէջ տեսնես ա-  
մեն բան բաց եւ որոշ խօսիլս , համոզուէ՛ ինձ որ մեր  
արդի սովորական քաղաքականութիւնը ամենեւին յա-  
րաբերութիւն չունի ճշմարիտ պարկեշտութեան հետ .  
վասն զի նա իւր անթափանցելի վարագոյրովը կը ծած-  
կէ մեր ներքին աղէտները , եւ հետեւաբար նոցա զար-  
հուրելի կերպարանքը մեր տեսութենէն հեռու պահե-  
լով , կը զրկէ զմեզ հսկողութեան փրկարար պարիս-  
պէն , եւ ո՛հ , մեր երիտասարդաց շատերը սոյն սովո-  
րական քաղաքականութեան պատճառաւ է որ օրէ օր  
գերեզմանաց մէջ կը թաւալին :

Գիտեմ , շատերը որ ամենեւին տեղեկութիւն չու-  
նին մարդկային կազմութեան օրէնքներուն վրայ , ըզ-  
մեզ պիտի դատապարտեն եւ ծուռ մեկնութիւններ  
պիտի տան մեր արդի աշխատասիրութեան . սակայն  
մենք որ նպատակնիս բարի է , ամենեւին չենք կա-  
րող նոցա ըսելիքները եւ գանգատները բանի տեղ  
դնել , եւ մեր պարտականութիւնը չի կատարել :



Գ Լ Ո Ի Խ Ա .

Մ Ն Ո Տ Ի Զ Գ Ո Ի Շ Ա Ի Ո Ր Ո Ի Թ Ի Ի Ն

« Կէս ճշմարտութիւնը ամբողջ ստույգութիւնէ մը աւելի վտանգաւոր է » :

Վերջապէս եկած հասած է ալ ժամանակը՝ որ մենք ալ եւս ազատիմք այն կեղծ եւ շինծու ամօթխածութեանէն, որ մեր աճումը վիրաւորած եւ հարազատ անմեղութիւնը կերպարանափոխ ըրած է . բաւ եղաւ ալ մարդկային ընկերութեան կրած միասնեցող այս անհարազատ պարկեշտութեանէն, որ կը թողու ակտերուն զարհուրելի կերպարանքները ուղած աստիճաններնուն հասնելու, եւ փոխանակ զանոնք երեւան հանելու եւ անոնց դարմանները դանելու, կ'ստիպէ զմեզ զգուանօք երես դարձնել անոնցմէ, եւ թողուլ որ կրճեն եւ բնաջինջ ընեն մեր ամբողջ կազմուածքը :

Անշուշտ շատ անձինք կան դեռ՝ որ մեր վերոյգրուեալ խօսքերը կը դատապարտեն, եւ սնտոյի զգուշաւորութեամբ մը կը փափաքին որ մարդկային ընկերութիւնը որչափ որ հնարաւոր է՝ տղէտ մնայ իւր բարելաւութեանը : Այս մէկ անհարազատ պարկեշտութիւն մը, որ ամենեւին յարաբերութիւն չունի հարազատ պարկեշտութեան հետ, որ կնկան մը շնորհքներէն մին է, եւ որմէ անսկեսաանկիրթ մարդս անգամ պարտի իւր բաժինն ունենալ . ահա՛ այս ամօթխածութիւնն է որ մարդս բոլորովին աննկատ կ'ընէ հետեւանքներու : Թէ եւ կենաց աղբիւրը աստիճանաբար կը ցամաքի, թէ եւ

Հիւանդութիւնք անթիւ տեսակներով զմեզ ճշակտոր  
 կ'ընեն, թէեւ մահը Արարչին արարածներուն ամենա-  
 գեղեցիկները կը յափշտակէ, թէեւ մարք իւրեանց զա-  
 ւակներուն վրայ կուլան, նոցա նուազումը, տկարու-  
 թիւնը եւ գրեթէ մահուան գոյնը առած լինելնին տես-  
 նելով, թէեւ կը տեսնեմք մեր երիտասարդ բարեկա-  
 մաց տարածամ մահուան ճիրաններուն մատնուելով  
 անդառնալի երկիրը երթալնին, եւայլն, եւայլն, եւ  
 թէեւ բոլոր այս տխուր չարեաց ամենագլխաւոր պատ-  
 ճառին վրայ տեղեկութիւն ունիմք, (որն որ պիտի  
 բացատրուի այս աշխատութեան մէջ) սակայն սովորա-  
 սէր ընկերութիւնը՝ դեռ կը խոժոռի այսպիսի ամենա-  
 կարեւոր եւ փափուկ կէտի մը վրայ խօսողին դէմ . . .  
 սովորութիւն . . . որ ամենեւին հոգ չ'ըներ անթիւ զագ-  
 րագործութիւնները, միայն թէ խաւարի մէջ տեղի ու-  
 նենան եւ ընկերութեանց մէջ չի յիշուին. եւ թէ եւ  
 ընկերութեան ամեն մէկ անհատ շատ աղէկ գիտէ, որ  
 իւր գաղտնիքը ուրիշներն ալ ունին, սակայն չի կայ  
 մէկը որ բարձրաձայն հնչէ զայն եւ կամ թէ թուղթի  
 մը կտորի վրայ գրել համարձակի. այսպէս սովորու-  
 թեամբ թէեւ ամեն մէկ զուարթ եւ անխորհուրդ խու-  
 ժան, որոնք նոյն սովորութեան տաճարին մէջ կ'երկըր-  
 պագեն, գիտեն թէ ամեն ուրիշ անհատ տեղեակ է այս  
 զագրագործութեան գոյութեանը, եւ շատերուն տգի-  
 տաբար նոյն զագրագործութեան գերի եղած լինելնին՝  
 առանց հետեւանքին տեղեակ լինելու, սակայն ոչ ոք  
 կը համարձակի ձայն բարձրացնել այսպիսի վտանգաւոր  
 կացութեան մը դէմ: Այս խնդրոյ վրայ աւելի բացատ-  
 րութիւններ տալու համար շատ բան գրել հարկաւոր է.  
 Բայց մենք ընթերցողաց ձանձրութիւն չի տալու համար,  
 բաւական կը սեպենք ըսել թէ «Բնութիւնը այս տեսակ  
 բաներու մէջ արհեստէն աւելի լաւ առաջնորդ մի է» . . .  
 եւ ես կը զարմանամ այն անձանց վրայ, որք կը պար-  
 ծենան թէ իւրեանց աղջիկները լիովին անտեղեակ են՝



ամուսնութեան նկատմամբ տեղի ունենալիք իրողու-  
թեանց եւ ծննդական գործարաններու վրայ . եւ շի-  
տակը չեմ քաշուիր հարցնելու թէ, ինչո՞ւ իրենց աղ-  
ջիկները տեղեկութիւն ունին ստամոքսի, բերնի, աչքի  
եւ անոնց ըրած գործողութիւններուն վրայ, միթէ կա՞յ  
այնպիսի պատճառ մը՝ որ աղջիկները իրենց կազմու-  
թեան մէկ մասը ուսանելու եւ ուրիշ մաս մը չ'ուսանե-  
լու ստիպէ . . . ամենեւին պատճառ չի կայ, եւ հետե-  
ւաբար այսպիսի զգուշաւորութիւն մը բոլորովին անըն-  
դունելի է . եւ կամ թէ ոչ՝ մտորակազմութեան նկատ-  
մամբ գտնուած բոլոր գիտութիւնները, պէտք է որ  
դատապարտուին կամ մերժուին : Շատ ծնողքներ իւր-  
եանց աղջիկներուն կուրծքերնին սեղմելով կրած վնաս-  
ներնին տեսնելով, երբ կը համոզուին թէ կուրծքի նը-  
կատմամբ կազմաբանական գիտութիւնը շատ կարեւոր  
է նոցա համար, հապա ինչո՞ւ համար նոյն գիտութիւնը  
կարեւոր չի պիտի լինի նոցա ծննդական գործարանաց  
նկատմամբ :

Գարձեալ այնպէս կարծուած է թէ աղջիկ մը թէ  
որ մէկէ մը չ'ուսանի իւր ծննդական գործարանաց  
ի՞նչ նպատակներու համար գործածուիլը, լիովին  
տգէտ կը մնայ նոյն իրողութեանց վրայ . բայց ես կ'ը-  
սեմ, թող ծնողք ամենեւին այսպիսի կարծիքով մը  
ինքզինքնին չի խաբեն, վասն զի թող լաւ գիտնան թէ  
« բնութեան ձայնը մեր լուծեանէն զօրաւոր է » զոր  
անպատճառ պիտի մղէ աղջիկները՝ որ ուսկից լինի  
թող լինի, ուսանին նոյն իրողութիւնները եւ հետեւա-  
բար շատ անգամ գէշ աղբիւրէ մը պիտի քաղեն իւր-  
եանց գիտութիւնը, եւ ան ալ անշուշտ վտանգաւոր,  
ծուռ եւ բարոյականութիւննին եղծող տեղեկութիւն-  
ներ : Ծնողք երբ ինքզինքնին կը մխիթարեն իրենց  
աղջկանց այս մասին նկատմամբ ունեցած տգիտու-  
թիւններուն համար, նոյն միջոցին աղջիկները վտան-  
գաւոր եւ բարոյականութեան գէմ խել մը սկզբունք

ներու տէր եղած են արդէն : Բնութիւնը աղջիկ մը ար-  
 բունքի հասցնելով՝ խնայ կուտայ նորա թէ ինք կնու-  
 թեան պաշտօնը ունենալու է, եւ աղջիկը նորա ձայնին  
 լսելով պիտի սկսի փնտռել այն գիտութիւնը, որով ինքըս-  
 տեղեակ պիտի լինի կնութեան պաշտօնին ինչ լինելուն.  
 «Թող ծնողք արգիլեն իւրեանց աղջիկները ճշմարիտ  
 աղբիւրներու դիմելէ, սակայն թող միշտ ալ վստահ լի-  
 նին որ նոքա վտանգաւոր աղբիւրներու պիտի դիմեն» :  
 Բայց մենք մեր նպատակին դառնանք . մի՛ պատմեր  
 քու զաւակիդ թէ դրացիին տունը գող մտեր է, չըլլայ  
 որ նա ալ գող լինի . մի՛ պատմեր նորա մարդասպա-  
 նութեան պատմութիւն մը՝ որ մարդասպան չլինի, եւ  
 մի՛ պատմեր նորա թէ մէկը յուսահատաբար ինքզինքը  
 սպաններ է, չըլլայ որ նա ալ օր մը անձնասպան լինի՝ . . .  
 յիմարական չե՞ն այս դասերը, ուրեմն ինչո՞ւ յիմարա-  
 կան սկզբունք մը չի պիտի սեպենք տղայոց գիճութեան  
 նկատմամբ տրուելիք խրատներուն մերժուիլը, եւ մա-  
 նաւանդ քանի որ բնութիւնը թէեւ տղու մը գող, մար-  
 դասպան եւ անձնասպան լինիլ չ'ուսուցաներ, կամ զա-  
 նոնք ուսանելու մղում մը չի տար, բայց գիճութիւն  
 ընելու կուտայ, ուրեմն ինչո՞ւ համար առջիններուն  
 չափ տղայ մը չի պիտի խրատենք որ գիճութիւն չ'ը-  
 նէ, ինչո՞ւ գիճութեան ամեն զարհուրելի արգասիք-  
 ները չի պիտի իրեն պատմենք . միթէ ծնողք կատարե-  
 լապէս համոզուած չե՞ն դեռ, թէ տղաք որ եւ իցէ  
 կերպով գիճութեան կ'սկսին առանց իրենց ծնողաց գի-  
 տութեանը . եւ ծնողք արդեօք այս չարեաց առջեւը  
 առնելու համար գտած են ուրիշ միջոց մը՝ որ կարեւո-  
 րութիւն չեն տեսներ իւրեանց տղաքներուն խօսիլ գի-  
 ճութեան եւ անոր զարհուրելի արգասիքներուն վրայ,  
 որով շատ չարիքներու առջեւ առնուլ միայն հնարաւոր  
 է . ուրեմն վայելուչ չէ՞ թէ որ ծնողք ալ եւս մէկգի-  
 դնեն իւրեանց այս նախասպաշարեալ տգիտութիւնը,  
 եւ Արարչին իրենց յանձնած զաւկրներուն բարեացը

համար՝ դիմեն այն մէկ հատիկ միջոցին , որով հնարաւոր է միայն ապագայ սերունդի մը փրկութիւնը եւ երջանկութիւնը :

Հռչակաւորն Վալէմանտ այսպէս կ'ըսէ հառաչելով . « դիրք մը չ'ունինք ամենեւին որ խօսի այնպիսի հիւանդութեան մը վրայ , որ մարդս կը նուաստացնէ , նորա երջանկութիւնը կը թունաւորէ , եւ մարդկային ամբողջ ընկերութիւնը կը սլառակտէ » . եւ ըսմիթ այսպէս կը խօսի . « յիրաւի խիստ զարմանալի է որ հեղինակ մը չի կայ որ գիճութեան նկատմամբ խօսի ինչպէս որ պէտք է » իսկ մենք կ'աղաղակեմք թէ դաժան է նաեւ ամբարիշտ որ լաւ գիտնալով գիճութեան սոսկալի ճարակումը սլատանեաց եւ երիտասարդաց մէջ , փոխանակ ողբալու նոցա կարեկցութեան արժանի կացութեան վրայ , եւ փափագելու որ այս չարեաց նկատմամբ ամենուն մտքերը լուսաւորող հեղինակութիւններ հրատարակուին , կ'ելլէ եւ անխղճաբար դէմ կը խօսի մեզ մեր արդի աշխատութեան նկատմամբ որ խղճմտանքի կատարեալ խաղաղութեամբ ահաւասիկ կը հրատարակեմք :

**Գ Լ Ո Ւ Խ Բ .**

**Գ Ի Ճ Ո Ւ Թ Ի Ի Ն**

« Մ ո լ ու թ իւ ն ը այնպիսի ճիւղ մի է , զոր ատելու համար տեսնել հարկ է » :

Գիճութեան վտանգաւոր սովորութիւնը կենաց մէջ շատ կանուխ սկսած է , մանաւանդ այն երկիրներուն մէջ , որոնց կլիմաները ծննդական դործարաններուն վրայ շատ ներգործութիւն ունին : Քիչ մարդիկ կրնան խորհիլ թէ տղաք իրենց ամենափափուկ հասակին մէջ կրնան այս մոլութեան ենթակայ լինիլ . բայց մենք եւ

անշուշտ շատ ուրիշներ համագուած եմք թէ, տղաք՝  
երեք չորս տարեկան եղած ժամանակնին անգամ կըր-  
նան գիճութեան սկսիլ, եւ թէեւ անշուշտ այս միջո-  
ցիս հոսում մը տեղի չ'ունենար, բայց այն հաճոյա-  
կան զգացմունքը որ կղիթորին մէջ տեղի կ'ունենայ,  
կը հրապուրէ մանկիկը իւր ընթացքը շարունակել եւ  
տգիտաբար ինքզինքը եղծել. ուրեմն մեծ զգուշու-  
թիւն պէտք է որ, ծնողք կամ խնամածուք ամենե-  
ւին չի խառնեն մանկանց ծննդական գործարանները,  
վասն զի ասանկով միայն շատ անգամ տղաք գիճու-  
թեան մոլութեանը կ'ենթակայանան: Երեք կամ չորս  
տարեկան տղեկի մը գիճութիւնը խիստ մահառիթ ներ-  
գործութիւն ունի. յիրաւի թէեւ այս միջոցիս մարմի-  
նին ամենէն կենսական հեղուկը չի կորսուիր, սակայն  
շատ ուրիշ հիւանդութիւններ անշուշտ յառաջ կու-  
գան. մասնաւորապէս տղեկին ուղեղը եւ ջիղերը եղ-  
ծող հիւանդութիւններ:

Գիճութիւնէ յառաջ եկած հիւանդութիւնները շատ  
եւ ծանր են . . . ջղային դրութեան սաստիկ գրգռումը  
եւ նոցա զօրութեան սպառումը, այնպիսի ջղային  
վրդովում մը յառաջ կը բերէ, որ մահ կը պատճառէ.  
Մօնթրելը կը հաստատէ թէ գիճութեան ուղեղի մէջ  
ըրած ցնցողական բաղխումներուն կրկնումները շատ  
անգամ մահառիթ են: Եւ Ս. Վիչէնեան այսպէս կը  
խօսի այս մօլութեան վրայ իւր Մանկատածութիւն ա-  
նուն ընտիր գրքին մէջ: «Ս.Յ» մօլութիւնը նախ մար-  
մինը կը տկարացնէ, կը հիւանդացնէ ու մահ անգամ  
կը բերէ. երկրորդ՝ միտքը կը կուրացնէ ու գրեթէ  
ատենէն առաջ կը ծերացնէ թէ՛ մտքի՝ թէ՛ մարմնոյ  
կողմէն»: 181-182: Սակայն երբ այս անվայել գըրգ-  
ռումը եւ նորա ճնշական հետեւանքը բնական մահ-  
ուամբ չի վերջանար, տասնէն իննին մտաւորական մահ  
կը պատճառէ, եւ բոլոր իմացական կարողութիւններու  
խանգարում. քանի քանի եօթը ութը տարեկան տը-

ղաքներ դիտած ունիմ ես, որոնք իրենց ծնողաց սլա-  
տիւ եւ ցնծութիւն լինելու փոխանակ, այս վտանգա-  
ւոր սովորութեամբ՝ ապշութեան զոհ եղած են. քանի  
քանի տղաքներ այս մոլութեան պատճառաւ նիհար,  
զուհաթափ, զայրացեալ եւ տղեղ կերպարանք մը ըս-  
տացած են. սոցա քունը կարճ, հիւժումնին երագ, եւ  
մահը անշուշտ է թէ որ չի դարմանուին: Չղային ար-  
կածները ասկից յառաջ կուգան գլխաւորաբար, ինչ-  
պէս ջղացաւութեան ստէպ, մասնաւոր կամ ամբողջ  
ցնցողական շարժումներ, լուսնոտութիւն, անդամա-  
լուծութիւն եւ անդամներու կծկումներ:

Ղինի որ գիճութեան որս եղող սղան ամուր կազ-  
մուածք մը ունենայ, եւ այս ամեն չարիքներէն ազատ  
մնայ, սակայն բնութիւնը անշուշտ իւր ժամանակէն  
չատ կանուխ պիտի արթննայ եւ սերմը պիտի սկսի հո-  
սիլ. այս պարագայիս տակ ցանկութիւնը ինքզինքը  
կը յայտնէ, քանի որ գործարանները բոլորովին ան-  
յարմար են դեռ:

Սերմը հոսիլ սկսելուն պէս՝ բնականաբար հաճու-  
թիւնը կը բազմապատկի, եւ հետեւաբար սովորութիւնը  
կը հաստատուի, նմանապէս եւ գիճութիւնը աւելի  
ստէպ կը գործադրուի, եւ ահա անվայել գրգռման  
հետ դրութիւնը կ'սկսի ցամաքիլ մարմնոյ ամենակա-  
րեւոր եւ կենսական հեղուկին կորուստովը: Մարդկա-  
յին կազմութեան վրայ տեղեկութիւն ունեցողները թէ  
եւ կը սոսկան այս մոլութենէն, եւ երկիւղով կը նային  
անկից գալիք հետեւանքներուն վրայ, սակայն անձ-  
նանուէր եւ խեղճ պատանին այս անգութ չաստուա-  
ծուհիին առջեւ դեռ կը ծնրադրէ, բոլորովին անհոգ  
եւ աներկիւղ. նա չի կրնար տեսնել այն խորվիրապը՝  
որ իւր ոտքին տակ կեցած է, այն ընդարձակ եւ ա-  
հագին անդնդախոր պարասլումը՝ որոյ եզրին վրայ  
ինքը կը դողդղայ:

Բայց կան շատեր որ ան ժամանակ գիճութեան կը

սկսին, երբ իրենց ծննդական գործարանները այնպիսի կացութեան մը հասնին, որ ինքնին սկսին, բայց այս աւելի ցուրտ կլիմաներու տակ տեղի կ'ունենայ քան թէ տաք: Տղաք այս մոլութեան գործադրութիւնը երբեմն իւրեանց դպրոցի ընկերներէն կ'աւսանին, եւ մանաւանդ այնպիսի գիշերօթիկ ուսումնարաններու մէջ, ուր մէկ քանի տղաք մի եւ նոյն սենեակի մէջ կը պառկին. երբեմն ալ դիպուածով կ'սկսի այս մոլութիւնը. ձի հեծնալը շատ անգամ այս արգասաւորութիւնը կ'ունենայ, ծննդական գործարանները համետին վրայ հաճելի շփում մը ունենալով. եւ երբեմն ալ տղաք երեսի վրայ պառկելով այս մոլութեան պատճառներուն կը հանդպին, վերջապէս այս կամ այն միջոցաւ տղաք ուշ կամ կանուխ գիճութեան կ'սկսին. ուստի ամենամեծ զգուշութիւն հարկաւոր է ծնողաց որ իրենց ամեն ջանքը 'ի գործ դնեն, իւրեանց զաւկրները կարելի եղածին չափ հեռու պահելու բոլոր այն միջոցներէն, որոնցմէ այս մոլութեան գրգիռ մը կը յուսացուի:

Գիճութեան գործադրութիւնը չէ թէ միայն պատանեաց եւ երիտասարդաց մէջ կը պատահի եւ կը շարունակուի, այլ նաեւ շատ անգամ չափահաս մարդիկ նորա գերի եղած են, եւ մինչեւ անգամ ամուսնացեալ անձինք. յիրուի այս մոլութենէն ազատիլը շատ դժուար բան է՝ մինչեւ որ բոլորովին չի եղծուի այրական զօրութիւնը. « երսուն կամ քառսուն տարեկան ամուսնացեալ մարդիկ տեսած եմ », կ'ըսէ համբաւաւոր հեղինակ մը, որ բաւական անձնիշխանութիւն չունէին այս մոլութիւննին մէկդի դնելու, որոնք տարիներով իւրեանց կանանց հետ մերձաւորութիւն ըրած չունէին այս մոլութեան պատճառաւ »: Բենիամին անուն մէկը կը յիշէ բժիշկ Խան, որ տասն եւ վեց տարեկան հասակին, առանց դեռ կնկան մը հետ հազորդակցութիւն ունենալու, դիպուածով գիճութեան սկսեր է, եւ տա-

րիներէ ետքը թէեւ ըրածին վտանգաւորութիւնը գի-  
 տէ եղեր, սակայն իւր մոլութիւնը չէ կրցեր թողու-  
 այս անձը քսան եւ մէկ տարեկան հասակին, իւր բա-  
 րեկամաց թախանձանքէն համոզեալ, ամուսնացեր է  
 գեղեցիկ եւ հրապուրիչ աղջկան մը հետ եւ միանգա-  
 մայն թողեր է իւր մոլութիւնը, բայց աւա՛ղ որ մարդ-  
 կային որոշումները անհաստատ եւ յոյսերը անհիմն են...  
 Բենիամին քանի մը ամիսէն վերջը իւր նախկին մոլու-  
 թեանը սկսեր է, իւր ցանկական կիրքը երկու կերպով  
 'ի գործ դնելով, եւ որոյ հետեւութիւնը եղեր է հիւանդ  
 եւ տկար զաւկի մը ծնունդը, որն որ բարեբաղդաբար  
 մեռեր է... բարեբաղդաբար, այո, վասն զի այսպիսի  
 զաւակի մը կեանքը, թէ ինքզինքին եւ թէ իւր շուրջը  
 գտնուողներուն ցաւալի տեսարան մը պիտի լինի ան-  
 շուշտ: Բենիամինի կինը դարձեալ զաւակ մը բերեր է,  
 բայց մեռած եւ սրակաս. որոյ վրայ Բենիամին քիչ մը  
 խորհելով՝ անմիջապէս համոզուեր է թէ՛ ինքն է այս  
 չարեաց կամ մարդասպանութեան մի միայն սլատձաւը,  
 ուստի այս անգամ իւր մոլութիւնը թողելու կատարեալ  
 որոշում մը ըրեր է, բայց այս միջոցէս քիչ մը ետքը հե-  
 ոու քաղաքի մը մէջ գտնուող իւր մէկ ազգականը մեռ-  
 նելով՝ հոն կ'երթայ եւ ահա փորձութիւնը կը յարձակի  
 նորա վրայ, կը յաղթէ զայն եւ մոլութիւնը կ'սկսի.  
 Ժամանակէ մը վերջը երբ ետ կը դառնայ, կը գտնէ որ  
 զուգաւորելու կարողութիւնը կորուսեր է, եւ միանգա-  
 մայն իւր կինը անհնարին կը տագնապի եւ կը թշուա-  
 ռանայ, Բենիամին կը կատղի եւ կ'ուզէ ինքզինքն ըս-  
 պաննել, բայց իւր հրեշտակ կնկան աղերսանքները զին-  
 քը ետ կը բռնեն իւր անմարդավայել որոշումէն, եւ  
 կ'սկսի դարման փնտուել իւր թշուառութեանը, շատ  
 բժիշկներու ձեռք մնալէն վերջը բժիշկ խանին կը գրէ,  
 եւ նորա հմտութեամբը վերջապէս կ'ազատի իւր աղե-  
 տալի կացութենէն, 'ի մեծ մխիթարութիւն իւր հա-  
 լատարիմ կողակցին:

Հիմա խորհել օրինաւոր է թէ, այսպիսի մարդ մը իւր կնիկանը աչքերուն ի՞նչ տեսակ բան մը կ'երեւայ, որոյ հետ մինչեւ կենաց վերջը ապրիլ երդում ըրած է, եւ որոյ հետ անկարող է կատարելու ան սլաշտօնը՝ որ բնութիւնը իւր սեռին գործադրել՝ եւ իւր կնիկան նոյն գործադրութեան սպասել տնօրինած է: Բենիամինի սէս օրինակներ դանելը շատ դժուարին է. սակայն աւելի ցաւալի սրտոճառաւ մը, ինչու որ նոյն կացութեան ենթակայ եղողներէն շատերը ամուսնանալէ առաջ այրական զօրութիւնն ունենալէ կը դադարին գրեթէ. թէեւ այս արգասիքն ալ շատ անգամ շատ մը մարդ կոչուելու անարժան էակներ չ'արգիլեր ամուսնանալէ եւ անմեղ կոյս մը թշուառ ընելէ. որն որ թէ որ դիտնայ իւր անմարդութեան սրտոճառը, անշուշտ զինքն ստելու մեծ իրաւունք պիտի ստանայ:

Գիճութենէ յառաջ եկած չարիքները թէ որ մէկիկ մէկիկ համրելու ելլենք՝ մեծամեծ մատենաներ լեցրնելու պիտի պարտաւորիմք, ուստի թողլով ամենքը, խօսիմք սերմնահոսութեան ախտին վրայ, որ մի միայն գիճութեան արգասիքն է, եւ որմէ յառաջ կուգայ անթիւ ուրիշ հիւանդութիւններ: Բայց նախ այս գլխուս մէջ՝ համառօտիւ պարտիմ բացատրել ամորձիքի մէջ եղող ախտացեալ երակը որ յառաջ կուգայ գիճութենէ:

Մէկ գործարանի մը (հոգ չէ թէ մարմնոյ որ կողմ զետեղուած է) ստէպ եւ անկարելոր գործողութիւնը, նոյն գործարանին մէջ շատ արիւն հոսել կը սլատճառէ, որով եւ արեան երակները թէ՛ դիրքով եւ թէ՛ չափով կ'ընդարձակին. այս է ահա ամորձիքի մէջ տեղի ունեցած ախտաւորութիւնն ալ: Նոյն գործարանաց շարունակական գրգռմամբը եւ գործողութեամբը, եւ սերմնական հեղուկին շարունակ լեցուելով եւ սարսլըվելովը, երակները սոսկալի կերպով կը տարածին եւ կը բազմանան, եւ միանգամայն մաշկերնին կը հաստնայ: Երբեմն ալ եւ երբեմն ձախ ամորձիքին վերնամաշկը,



եւ երբեմն երկուքինն ալ 'ի միասին կ'երկննայ, ծաւ-  
քերը կ'աներեւոյթանան, եւ բոլոր գործարանը կը կա-  
խուի. եւ երբեմն ալ ամորձիքը բոլորովին կ'անհետա-  
նայ որ շատ անգամ անբուժելի է:

Եկեղեցականի մը զաւակը կար՝ նիհար, գունաթափ  
եւ տգեղ. ասիկայ տասը տարեկան հասակին սկսեր է  
գիճութեան, իսկ այս մոլութեան սրատճառ եղեր է իւր  
ծառի մը վրայ ելած ժամանակը արտադրական ան-  
դամներուն զգացած հաճութիւնը. այս թշուառ երի-  
տասարդը տարիներով այս մոլութիւնը շարունակելով՝  
վերջապէս կ'սկսի իւր կազմութիւնը եղծուիլ, գոյնը կը  
նեւէ, կերակուր ուտելու ակտիւթակը կը տկարանայ,  
զլխուն ետեւի կողմերը կ'սկսին սաստիկ ցաւիլ, նմա-  
նապէս ամորձիքները եւ երիկամունքները. իսկ սերմ-  
նական հոսումը յաճախ տեղի ունենալով՝ կ'սկսի գե-  
րեզմանի մօտենալ. իւր բարեկամները կը շփոթին իւր  
կերպարանքէն, տանը բժիշկը կը կանչուի, որն որ խել  
մը անկարեւոր դեղեր կ'սկսի տալ հիւանդութիւնը չի  
կրնալ ճանչնալուն համար. բայց ամեն ջանք բնակա-  
նաբար անօգուտ կ'ելլէ . . . հիւանդութեան բուն ար-  
մատը չի կրնար գտնել բժիշկը: Տղան կ'սկսի կասկա-  
ծիլ, սակայն չի համարձակիր մէկու մը յայտնել, վասն  
զի ընկերութեան ամենէն առաջի հրամանն է չի խօսիլ  
արտադրական գործարանաց վրայ ամենեւին'. . . ուստի  
օրէ օր կը գէշնայ, բժիշկը ուսերը կը թոթուէ եւ ամեն  
մարդ իրմէ յոյսերնին կը կտրեն: Ա՛րջապէս երիտա-  
սարդը մեծ փոփոխութիւն մը կը նշմարէ իւր ծննդա-  
կան գործարաններուն վրայ, կը տեսնէ որ վերնամաշկը  
կախուած, եւ ձախ ամորձիքը աներեւոյթացեր է՝ տե-  
ղը խել մը հաստ թելեր մնալով. խեղճը ասոնք տես-  
նելով ալ տարակոյսը չի մնար, եւ սկզբունքի տէր բը-  
ժիշկի մը խնամքովը շուտով կ'աղեկնայ, եւ քիչ ժամա-  
նակէն ալ գեղեցիկ եւ վայելուչ աղջկանն մը հետ կ'ա-  
մուսնանայ: Այս երիտասարդը իւր հիւանդութեան

միջոցին կը խօսէր արտասուելով . « ա՛հ , թէ որ իմ հայրս եւ կամ թէ ուրիշ մը , ինձ հետ խօսակցէր գիծութեան զարհուրելի հետեւանքներուն վրայ , երբ ես պատանի մ'էի , զիս բոլոր այս ցաւերէն պիտի փրկէր , բայց եղո՛ւկ որ սովորութիւնը արդիլած էր անոր վրայ խօսիլ , որով եւ ես Աստուծոյ եւ իմ կազմութեանս դէմ մեղանշեցի կատարեալ տգիտութեամբ . . . անիծեա՛լ սովորութիւն . արդեօք քանի՛ քանիներու կենաց դահիճն եղած ես » : Այս երիտասարդին համառօտ պատմութիւնը մեզի երկու բան կ'ուսուցանէ . նախ՝ այս սովորութեան դեռ մեր մէջ գտնուելուն վտանգաւորութիւնը . երկրորդ՝ թէ ո՞րքան կարեւորութիւն կայ պատանեաց ուսուցանել ճննդական գործարանաց փափկութիւնը , եւ նոցա ենթակայ եղած հիւանդութիւնները ապօրինաւոր գործածութեամբ :

Գ Լ Ո Ւ Խ Գ .

Ս Ե Ր Մ Ն Ա Հ Ո Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

« Հաղիւ թէ իմացայ թէ կ'ապրիմ ես , երբ ահա՛ գտայ որ մահը արդէն զիս բռնած է » :  
Մ Ի Լ Թ Ը Ն

Գիծութեան ամենէն սովորական եւ անհրաժեշտ արգասիքը սերմնահոտութիւն կոչուած ախտն է , եւ ամենեւին հնարաւորութիւն չի կայ մարդու մը համար ո՞ր գիծութիւնը շարունակէ , եւ այս ախտէն ազատ մնայ : Բայց այս ըսածէս հետեւցնելու չէ թէ սերմնահոտութիւնը միշտ գիծութեան արգասիքն է , վասն զի կան շատ ուրիշ պատճառներ ալ որ այս ախտին ծնունդ կուտան , եւ մինչեւ անգամ ժառանգական ալ կը լինի : « Սերմնարարը , կ'ըսէ Նալէմանտ , ան բնական գրգռման ազդեցութեան տակ ինքզինքը կ'ծկտելու բնութիւն .

նը կ'ստանայ . այսպիսի պարագայից տակ փամփուշտը  
լեցուն սրահելը , տաք եւ կակուղ անկողնոյ մէջ եւ կըռ-  
նակի վրայ պառկիլը , ջերմ եւ ոգելից ըմպելիքներ  
գործածելը եւայլն՝ հոսումը աւելի կը դիւրացնեն , եւ  
ահա այս կացութեան մէջ է որ սերմնարարին եւ ու-  
ղեղին մէջ տեղը եղած փոխադարձ կապակցութիւնը  
հեշտական երազներ կ'արգասաւորէ » : Սերմնահոսու-  
թեան ախտին պատճառ կրնան լինիլ նաեւս հետեւ-  
եալները . տեռատեսութիւն , երկայն ծայր մաշկ ունե-  
նալ , ծայր մաշկին տակը աղտոտ սրահել , ոգելից ըմ-  
պելիք շատ գործածել , միզանցքարորոքում եւ հեշ-  
տական շոայլութիւն . բայց այս ամենէն աւելի դի-  
ճութիւնն է գլխաւոր պատճառ սերմնահոսութեան :

Պէտք է գիտնալ թէ սերմնական հեղուկը սերմնա-  
րարին մէջ կը պատրաստուի , եւ թէ փոքրիկ խողովակ-  
ներ կը բացուին ասոնց միաւորութենէն սերմնատուին  
հետ 'ի միասին միզանցքին մէջ , եւ թէ այս խողովակ-  
ներուն միջոցաւ սերմը կը փախչի . արդ առողջ մար-  
դուն այս խողովակները գոց են , եւ սերմը ամենեւին  
չի կրնար դուրս ելլել , մինչեւ որ բնութեան մղմամբը  
զուգաւորութեան բնական գործողութիւնը կատարուի .  
բայց երբոր ասոնք տուփական շոայլութեամբ կը տկա-  
րանան եւ կամ թէ գիճութեամբ ընդարձակութիւն  
կ'ստանան եւ ամենաթեթեւ շարժառիթ մը բաւական  
կը լինի նոցա սերմը դուրս տալու , անշուշտ սերմը չի  
կատարելագործուած , մինչեւ անգամ փամփուշտին  
միզով լեցուելէն վերջը կրած կծկումը բաւական կը  
լինի , եւ ընդհանրապէս այսպիսի մէկու մը միզին վեր-  
ջին կաթիլները թէ որ քննուին , մէջը սերմ պիտի տես-  
նուի : Եթէ այս տկարութիւնը եւ ընդարձակութիւնը  
չարունակուի , ալ շարժառիթի մը կարեւորութիւն չի  
մնար սերմը դուրս տալու , ըստ որում ալ սերմը ինք-  
նին կը հոսի եւ անօթին մէջ ամենեւին չի կրնար կենալ ,  
այլ գոյանալուն սէս կամ միզանցքէն մեծ քանակու-

Թեամբ կը հոսի եւ կամ թէ ետ 'ի փամփուշտն դառնալով՝ մէզին հետ կ'ելլէ :

Ինչպէս որ կաթը եւ անոր նման ուրիշ բաներ , նոյնպէս ալ սերմնական հեղուկը արիւնէն կը զտուի , բայց որովհետեւ ասիկայ միւսներէն աւելի արեան կարօտ է , եւ հետեւաբար իւր կենդանականութիւնն ալ աւելի է . եւ յիրաւի ստուգուած է որ սերմնական հեղուկին կենդանականութիւնը արիւնին կենդանականութենէն քսան անգամ աւելի է , եւ հետեւաբար տասն եւ վեց տրամ սերմհեղուկ կորսնցընող մը երեք հարիւր քսան տրամ արիւն կորսնցուցած կը լինի : Այս փոքրիկ հաշիւը կըրնայ համոզել իմ սիրելի ընթերցողներո՞ւ , գիճութեան զարհուրելի վտանգներուն :

Մենդական գործարաններուն աղէկ վիճակին մէջ սերմնական հեղուկը շարունակ կը գոյանայ եւ կ'ամբարուի սերմնարանին մէջ՝ կանոնաւոր միջոցաւ անկից դուրս ելլելու համար , բայց այս հեղուկին կերպաւորութիւնը ամեն ուրիշ հեղուկներուն նման ջղային դրութեան իշխանութեան ներքեւ է , եւ հետեւաբար իւր գոյացումը առատ կը լինի , երբ միտքը շարունակ տուփական զգացմանց եւ ցանկական կրից վրայ մտածէ , եւ այսպէս՝ թէ որ լինի որ յաճախ հոսուի՝ աւելի առատ պիտի սկսի գոյանալ , եւ մարմինին մնացեալ գործարաններուն տկարութիւն պատճառել : Մարդկային կազմութեան օրէնքներուն վրայ քիչ մը գաղափար ունեցողը չի կրնար առանց զարհուրելու նայիլ այնպիսի անձի մը վրայ՝ որուն ցանկական կրից իշխողական ընթացքը բոլոր մարմնոյն համար գործածելի արիւնը մի միայն իւր գրգռեալ մէկ անդամին միջոցաւ սպառելու վրայ է :

Սերմնահոսութեան մէկ տեսակն ալ գիշերը տուփաերազներով սերմնական հեղուկին քունի մէջ հոսիլն է . եւ մարդիկ ընդհանրապէս երեւակայական նկարներով կ'ընծայեն այս իրողութիւնը , բայց ինչպէս կ'ըսէ Վա-

լէմանտ , « հեշտական նկարները որ քունի մէջ կ'երեւան , ծննդական դործարանաց գրգռումէն յառաջ կուգայ » : Պարոն մը որ գիճութեան անվայել սովորութեան տէր է եղեր , եւ վերջը իր ըրածին վտանգաւորութեանը տեղեակ լինելով թողեր է իւր սովորութիւնը , ըսկըսեր է ամեն գիշեր գեղեցիկ աղջկան մը հետ զուգաւորիլ երազին մէջ , եւ ասանկով այնքան տկարացեր է , որ բժիշկ խանի դիմեր է եւ նորա խնամատարութեամբը աղէկցեր է . այս պարոնին մէկ ամորձիքի մէջի սերմնարարը անյայտ է եղեր , արանդամը փոքրացեր եւ երազ խողովակները եղծուեր են , բայց խան գինքը դարմանելով ամենայնիւ աղէկցեր է :

Սերմնահոսութիւն ունեցող անձանց ոմանք ալ նրստած կամ շրջած ատեննին կ'զգան սերմնական հեղուկին փախչիլը , առանց ամենեւին հաճութիւն մը կամ արանդամին կանգնում պատճառելու :

Սերմնահոսութեան ախտին ամենէն գէշ տեսակը սերմին նախ փամփուշտին երթալը եւ միզով միատեղ գալն է , ըստ որում ասանկով հիւանդութիւնը տարիներով կը շարունակուի , եւ հիւանդը չ'իմանար եւ չի գիտեր թէ իւր տկարութեանը պատճառն ի՞նչ է :

Զաւակ չունեցող ազնուական մը կար , որոյ սերմը քննուելով . գտնուեցաւ որ սերմնահոսութիւն ունի . վարպետ բժիշկ մը զանի դարմանելով աղէկցուց , եւ քիչ մը ետքը գեղեցիկ զաւակի մը տէր եղաւ :

Սերմնահոսութեան ախտը ունեցողներուն սերմնորդերը կ'օտարտած կը լինին :

Երիտասարդ մը քսան եւ մէկ տարեկան կարգուեր է , եւ երեք զաւակի տէր լինելէն վերջը , զաւակներուն երկուքը եւ կինը մեռեր է . քիչ մը անցնելէն վերջը այս պարոնը նորէն կարգուեր է գեղեցիկ կնկան մը հետ , սակայն ո՞րքան վշտացեր է՝ երբ նորա հետ զուգաւորիլ չէ կրցեր , օրեր ամիսներ անցեր է եւ դեռ այս դժբաղդութեան վերջ մը չէ կրցեր տալ . իսկ կինը

սկսեր է պատճառ աչք նայիլ իւր վրայ . բայց բարեբաղ-  
դարար խելացի բարեկամի մը խրատին մտիկ ընելով  
ինքզինքը բժիշկի ցուցուցեր, դարմանուեր եւ աղէկ-  
ցեր է. այս պարոնին զուգաւորելու անկարող լինելուն  
պատճառը իւր առջի կնկան մահուանէն ետքը ըրած  
զինութիւնն էր :

Զուգաւորելու անկարող լինելը յիրաւի կարգուած  
մարդու մը համար ամենամեծ յանցանք է, վասն զի  
կին մը ի՞նչ աչքով կրնայ նայիլ այնպիսի մարդու մը  
երեսը որ բնութեան իրեն պարզեւած ամենէն մեծ  
երջանկութիւնը իրեն չի կրնար մատակարարել. արժան  
է հոս մեր ընթերցողաց առջեւ Սըր Սողէյ  
Քուրրի մէկ համառօտ խորհրդածութիւնը : « Սյսպիսի  
մարդու մը կրնայ Ստաղիկ իւր հրապոյրներովը մերձե-  
նալ առանց ազդեցութեան . այսպիսի մարդու մը քով  
չի գտնուիր կենդանի ազբիւր երջանկութեան եւ կեն-  
տական հոյն դարնան : Սյլ այնպիսին տխուր, ապուշ,  
սարսուիչ ձմեռ մի է՝ որոյ մէջ կենաց առուակը սառած  
է եւ կենդանական յատկութիւնները կործանած » :

Բժշկականութեան հռչակաւոր հեղինակ մը այսպէս  
կ'ըսէ . « զուգաւորելու անկարողութիւնը էրիկ մարդոց  
մէջ աւելի կը պատահի քան թէ կանանց, ինչու որ է-  
րիկ մարդուն վրայ է զուգաւորութեան մեծ պաշտօնը » :

Սերմնահոսութեան ախտի հանդարտներուն քսանէն  
տասն եւ ինը կրնան աղէկնալ . իսկ զուգաւորելու ան-  
կարող եղողները յիրաւի շատ մեծ հիւանդութեան մը  
տէր պարտին սեպել ինքզինքնին : Խրիմի վերջին պա-  
տերապիս մէջ անգղիացի դինուր մը վիրաւորուելով  
կորանցուց իւր ամորձիքները . ասի աղէկնալէն վերջը  
ամեն տեսակ զուարճարանութեամբ ինքզինքը կը մը-  
խիթարէր եւ բնաւ հող չէր ըներ . բայց երբ Անգլիա  
դնաց եւ նեաուեցաւ զինքն սպասող ամուսնոյ մը բազ-  
կացը մէջ, ան ատենը զգաց իւր կացութեան դժնդա-  
կութիւնը, եւ քիչ օրերէն վերջը ինքզինքն սպաննեց :

Քանի հաղարարներ կան արդեօք այս դժբաղդու-  
թեան ենթակայ եղող . երեւակայեմք թէ մարդ մը որ  
զուգաւորելու անկարող է , ո՞րքան մխիթարութիւն եւ  
երջանկութիւն կրնայ վայելել մարդկային ընկերու-  
թեան մէջ . ո՞րքան զարհուրելի կերպով արդեօք այս-  
պիսի մէկու մը խղճմտանքը պիտի տանջէ զինքը , երբ  
խորհի թէ ինքը իւր բուն ձեռքերովը գրկած է ինք-  
զինքը աշխարհիս ամենէն մեծ մէկ երջանկութենէն :

Թող ամեն երիտասարդ ըստ նկատում ընէ հետեւ-  
եալ պատճառներու եւ արդիւնքներու երկիրզազից դի-  
տողութիւններու . **Գիճ-Յի-նը՝ սերմահոսութիւն . սերմահոսու-  
թիւնը՝ զոգաորելու անխորդութիւն . զոգաորելու անխորդութիւնը՝  
յոսահափութիւն , եւ յոսահափութիւնը անհասարակութիւն կը պատճառէ :**

**Գ Լ Ո Ւ Խ Գ .**

**ՄԻՋԱՆՅՔԱՅԻՆՈՐԲՈՒԲՈՒՄՆ ԵՒ ՄԱՇՈՂԱԿԱՆ ԱԽՏ**

« Միայն խաղողին հիւթը չէ որ մարդուս  
բարոյականութիւնը կը կործանէ , այլ փա-  
ւամուտութիւնը , արծաթսիրութիւնը եւ գե-  
շեօնի կեներն ալ նոյնը կ'արգասաւորեն » :

ԳՕԲԸԲ

Ապօրինաւոր զուգաւորութիւններէ յառաջ եկած  
հիւանդութեանց տափական ակտք անունը կուտամք :

Շատ բծիչկներ եղած են , որ միզանցքաբորբոքումը  
եւ մաշտղական ակտք , մի եւ նոյն տեսակ ակտտ սեպած  
են , բայց իրողութիւնը այսպէս չէ , ինչպէս որ վարը  
պիտի յայտնեմք :

Տափական հիւանդութեանց սկզբնաւորութիւնը  
զաղանութեան մէջ թողուած է , եւ շատ հեղինակնե-  
րու այս նիւթիս վրայ ըրած ջանքերնին ամենն ալ ըն-  
դունայն ելած են : Եղան ոմանք որ ըսին թէ Ամերի-

կայէն Եւրոպա անցաւ Քօլտնպոսի ժամանակ, բայց այս ըսողները, Ռիքօրտի ըսածին պէս, չի խորհեցան թէ ի՞նչ պատասխանելու են, երբ Ամերիկայի բնիկները հարցնեն թէ «մենք ուսկի՞ց առինք»\* :

Այս հիւանդութեանց հնութիւնը անուրանալի է, եւ Սուրբ գրոց մէջ այնպիսի աստ մը կը յիշուի, որ շատ կը նմանի միզանցքաբորբոքման. (Ղու. ԺԵ. ՊԼ.) եւ ուրիշ տեղեր մաշոզականը յիշուած է, թէ եւ ոչ անուամբ. (Ղու. ԺԳ. ՊԼ. 2 հմբ.) Հիփոկրատ կը խօսի ծննդական գործարանաց վէրքերու վրայ, կալէն՝ ՊԼ. նօրակիայի փոխադրական հիւանդութիւն ունեցող ազգ մը կը յիշատակէ. եւ կէլսիւս ծննդական գործարանաց ենթակայ եղած հիւանդութեանց վրայ կը խօսի. Յոյնք, Ամերիկեցիք եւ Հռովմայի բժիշկները այս հիւանդութեանց վրայ խօսած են. եւ շիտակը շատ հաւանական է որ այս հիւանդութիւնները ամեն ժամանակ եւ ամեն երկրի մէջ կային . . . ուր որ զուգաւորութիւն կայ՝ հոն եւ տափական հիւանդութիւն ան-

\* Արեանք հաւատալ թէ այս հիւանդութիւնը հարկաւ սաստիկ տաք երկիրներու մէջ բնակող ժողովրդոց մէջ ծագումն առած է, վասն զի իխա տաք երկիրներու օդը այնպիսի հանգամանք մը ունի որ արեան անմաքրութեան և մարմնոց զանազան վէրքեր կը պատճառէ, մանաւանդ անթլիատ և ամեն օր ջրով ջլլուացւող ժողովրդոց մէջ. ուստի ասկից յայտնի կ'երևնայ որ այս հիւանդութիւնը այնպիսի ժողովրդոց մէջ առաջին անգամ տեսնուած է, որոնք տաք կլիմայից մէջ գանուելով հոգ աւրած ջնիւրեանց մաքրութեանը, և տափական հեշտութեան անձնատուր ընթացքով մը կատաղութիւն և բորբոքում տուած են իւրեանց ծննդական գործարանաց վրայ գանուած վէրքերուն, և յետոյ խնամութիւններ ընելով ուրիշ ազգաց հետ, նոցա ալ հաղորդած են իրենց աստերը, և ասանկով՝ այս աստը ճարակած է ամբողջ մարդկային ազգին մէջ : Մեր այս ըսածը աւելի կը հաստատուի թէ որ յիշենք թէ որքան խնամք կը տանէր Մովսէս որ նախ անթլիատ և անմաքուր հրէայ ջիմնայ, և երկրորդ խնամութիւն չ'ընեն անթլիատ և անմաքուր ազգաց հետ :



պակաս է, և Վ. Օլթեր ճշմարիտ խօսեցաւ բանով .  
 « Մաշտոցական ակադեմիայի և գեղեցիկ արհեստները միա-  
 տեղ յառաջ կ'երթան, բայց ոչ ոք չի կրնայ թէ ուսկից  
 սկզբնաւորութիւն առին » :

ՄԻԶԱՆՅ ԲԱՐՈՐԲՈՒԲՈՒՄՆ : Այս ակադեմիան մասնաւոր  
 թոյնի մը արդաստիքը չէ, և թէ ևս այս ակադեմիայի  
 նաւոր զուգաւորութեամբ կ'ստացուի, բայց միշտ այս-  
 պէս չէ իրողութիւնը, վասն զի այս ակադեմիայի կրնայ շատ  
 ուրիշ արտաքին պատճառներով ալ դալ. որոնք մի առ-  
 մի հոս յիշելու ժամանակ չունինք. բայց միայն այս-  
 չափաւ ըսինք որ վերջ մը տրուի այն անհամար այր և  
 կնկան մէջ եղած կռիւներուն, որ այս ակադեմիայի պատ-  
 ճառաւ կը լինին, իսկ ճէրիկը չի գործած յանցանքի  
 մը տէր կը սեպուի, և իւր ազէտ կնկանը ատելու-  
 թեանը ենթակայ մը կը լինի :

Միզանցքարորդութեան առաջին նշաններն են միզանց-  
 քին մածուցիկ բազմաթեւին մարմնաջուկը, դրդուումը  
 և տաքութիւնը, որոնցմէ քիչ մը ետքը հոսումը կը  
 տեսնուի, որուն գոյնը, սերտութիւնը և հոտը ակա-  
 տին աստիճանին և ուրիշ պարագայներու նայելով  
 կերպ կերպ կը լինին : Ընդհանրապէս երբ հոսումը ա-  
 ռաջին անգամ կ'երևայ, բարակ, ձերմակ և ջրային  
 հեղուկէ մը կը բաղկանայ, որ պարզ մածուցիկ է. բայց  
 շուտ մը կը փոխուի գոյնը և կը լինի դեղնագոյն, և  
 այս վիճակիս մէջ կը մնայ ատեն մը թէ որ չի դադարի  
 հոսելէ, ետքը դարձեալ կը փոխուի գոյնը՝ կը լինի ջր-  
 բազոյն և ջրոտ, և տարիներով այսպէս կրնայ մնալ,  
 որ միշտ վտանգաւոր արդաստիք մը կը բերէ ընդհանուր  
 մարդկային շէնքին :

Այս հիւանդութեան սկզբնաւորութեան միջոցին  
 դարմանելը շատ դիւրին է և անվնաս, բայց քանի  
 հիննայ՝ այնքան դժուար կը լինի առողջնալը :

ՄԱՀՈՂԱԿԱՆ ԱԽՏ : Այս ակադեմիան մասնաւոր թոյնի  
 մը արդաստիքն է, թէ ևս այս թոյնին բնութիւնը դեռ

գիտցուած չէ, ըստ որում « անոր գործող սկզբունքը  
 զատ եւ որոշ կերպարանքով յայտնուած չէ դեռ » :  
 Նախ մեր բոլոր գիտցածը սա է թէ՛ այս թոյնին ախ-  
 տածէա գործողութիւնը մէկ տեսակ մը կենդանական  
 ժանտութենէ, կը բաղկանայ տարրեր յատկութեամբ,  
 եւ ներգործութեամբ, եւ որն որ երբ կենդանի մար-  
 մինի մը գալչուի՝ մէկէն նայն մարմնայն բոլոր առողջու-  
 թիւնը կ'եղծէ, եւ այնպիսի վէրք մը կը պատճառէ,  
 որմէ իրեն նման թոյն կ'առնուի : Մաշտոզական ախտը  
 ամենեւին ինքնիրեն չի պատահիր, այլ միշտ ուրիշ  
 մարդէ մը կը փոխադրուի, թէ՛ զուգաւորութեամբ եւ  
 թէ՛ որ եւ իցէ ուրիշ կերպով մը : մաշտոզական ախտ ու-  
 նեցողին խմած գաւաթը, ծխած ծխադամորջը եւ այլն,  
 իրեն չափ վտանգաւոր են առողջ մարդկանց :

Մաշտոզական ախտը իւր բնութեանը համաձայն Քան-  
 կըր անուան ունի :

Մաշտոզական ախտին եւ միզանցքաբորբոքման մէջ  
 եղած մեծ տարրերու թիւնը Աիքորտ գտաւ վերջապէս՝  
 թէ՛ մաշտոզական վէրքին թոյնը՝ եւ թէ՛ միզանցքա-  
 բորբոքման հոսումը առնելով եւ փորձելով . առջինը  
 միշտ նոր վէրք մը կը բանար, իսկ երկրորդը՝ ամենե-  
 ւին բան մը չէր ընէր . ուստի մէկ Քանկը մը միշտ ու-  
 րիշ Քանկրէ մը յառաջ կուգայ, եւ մաշտոզական ախտ  
 ունեցող մը անպատճառ ուրիշ մաշտոզական ախտ ու-  
 նեցողէ մը առած է : Մարդուս այս հիւանդութեան  
 քիչ կամ շատ ենթակայ լինել իւր կազմութեան զօ-  
 րութեանը վրայ կայացած է . իսկ զուգաւորութեան  
 մէջ երկայն ծայր մաշկ ունեցողները աւելի ենթակայ  
 են այս հիւանդութիւնը առնելու, եւ յիրաւի շատ ան-  
 դամ պատահած է որ մի եւ նայն կնկան հետ զուգա-  
 ւորութիւն ընող մարդիկներին մէկը ախտը առեր եւ  
 միւսը չէ առեր, առջինին ծայր մաշկը կամ կարճ եւ  
 կամ թլփառուած լինելուն համար\* :

\* Նկատելու արժանի կ'է որ գրեթէ ամեն կրօնապետ

Մաշտոզական ախտին առաջին նշանը մարմնաջուճն է ,  
 ասի ցաւի կը փոխուի , եւ ետքը սաստիկ ցաւեր կու-  
 դան , եւ ասոնցմէ վերջը բորբոքում տեղի կ'ունենայ ,  
 եւ ահա մէկ փոքրիկ պալար մը երեւան կ'ելլէ թոյ-  
 նով լեցուն , եւ պատասելով խել մը խածաախչ վերքեր  
 կը պատճասէ . այս վերքերուն հանդամանքն է , բոր-  
 բոքեալ , եզրերնին անհարթ , արմատնին կարծր եւ  
 առողջանալու չզիջանող լինիլ :

Մաշտոզական վերքը զուգաւորութենէն մէկ երկու-  
 օր վերջը կրնայ յայտնուիլ , բայց երբեմն ալ երկու ա-  
 միսէն ետքը կը յայտնուի : Այս վերքը գարհուրելի  
 կերպով վտանգաւոր է , թէ որ սկզբնաւորութեան մի-  
 ջոցին առջեւը չ'առնուի :

Մաշտոզական ախտէն յառաջ եկած չարիքները եւ  
 հիւանդութիւնները անհամար են . այս ախտը մարդուս  
 բոլոր կազմութիւնը կը թունաւորէ , աչք , ախանջ , բե-  
 րան , քիթ , կսկորդ կը փտտին կը թափթփին . եւ ա-  
 մենագեղեցիկ մարդ մը բնութեան հրէշի մը չափ տը-  
 գեղ կ'ընեն . բայց այս չէ ամենը , մաշտոզական ախտին

թլիատութիւնը ընդունած և պաշտպանած են , և Քրիստոնէ-  
 ութիւնը այս օգտակար սովորութեան դէմ բան մը ըսած չունի .  
 իսկ արդի Իմաստասէրք շատ լաւ համոզւած են թլիատութեան  
 կարևորութեանը , և ես այնպէս կը հաւատամ թէ որ և իցէ ազգ մը  
 որ թլիատութեան սովորութիւնը ունի և անթլիատներու հեա-  
 տափական յարաբերութիւն չունենար՝ ծննդական գործարանաց  
 ենթակայ եղած շատ մը կենազրաւ հիւանդութիւններէ ազատ կը  
 մնայ , և հետեաբար էթէ ամեն ազգ թլիատութեան սովորու-  
 թիւնը ընդունին և ՚ի գործ դնեն , առփական հիւանդութեանց  
 առջև առնելու համար հարկ եղած ամենէն մէկ գլխաւոր միջոցը  
 ձեռք առած կը լինին . որքան երջանիկ պիտի լինէր մարդկային  
 սեւը թէ որ ամեն ազգ ՚ի վաղուց անախ թլիատութեան և ամեն  
 օր պարզ ջրով լուացուելու սովորութիւնը ունենային , որով  
 հարկաւ այսօր ընդհանուր մարդկային շէնքին կործանում ըս-  
 պտնացող առփական և ուրիշ այլ և այլ հիւանդութիւններ չի  
 պիտի գոյա՛ ային :

ձեռքն ինկնող եւ անսխալան դարմաններով շի լաւ  
ցած մարդը մարդկային ընկերութեան մէջ շրջող կեն-  
դանի ժանտախտ մը լինելէն 'ի դատ, հարիւրամեայ  
ծերունի մի է գերեզմանին եզրը դողդղացող:

## Գ Լ Ո Ւ Խ Ե .

Ք Ա Ն Ի Մ Ը Խ Յ Ս Ք Ա Լ

Այն ան մարդուն որ միանգամ տուփական հիւանդ  
դութեանց մէկուն ձեռքը որս կ'իյնայ, իսկ հազարա-  
պատիկ վայ ան մարդուն՝ որ տուփական հիւանդու-  
թիւններուն մէկուն ձեռքն իյնալէն վերջը ինքզինքը  
դարմանելու շի շտապիր, եւ հմուտ բժշկի մը ձեռք  
ինքզինքը յանձնելու տեղ, առաջին անգամ առջեւը  
ելլողին կը յանձնէ ինքզինքը առանց խորհելու թէ  
որ եւ իցէ հիւանդ մը աւելի լաւ է կատաղի վազրի մը  
առջեւ ձգուի քան թէ անփորձ բժշկի մը ձեռքը. վասն  
զի շատ ճշմարիտ խօսած կը լինիմք՝ թէ որ ըսեմք թէ  
մարդկային ընկերութիւնը սպաննողները, հիւանդու-  
թիւններէն եւ պատերազմներէն աւելի տպէտ բժիշկ-  
ներն են:

Ուստի, իմ սիրելի ընթերցողս, ես քեզի ամեն բա-  
նէ առաջ կ'աղաչեմ որ քու ցանկութեանդ սահման  
դնես. թէ որ գիճութեան աշակերտ մի ես՝ այս վայր-  
կեանէն թողուս այդ դարհուրելի սովորութիւնը. հե-  
ռացիր, կ'աղաչեմ, այդ մտութեանէն՝ կատաղի ցուլի մը  
առջեւէն փախչելու պէս. մեղքցի'ր ինքզինքդ եւ մարդ-  
կային ընկերութիւնը, եւ թո՛ղ որ իմ այս համառօտ  
յորդորս եւ կամ թէ աղաչանքս շարժէ քու սիրտդ:  
Եւ թէ որ քու ոտուրներդ սովորեր են յաճախելու այն  
անառակութեան տուները՝ լսէ՛ ինձ եւ համոզուէ՛ որ  
ան տուները գերեզմաններէ աւելի երկիւղալից վի-

բապտիստներ են, ուր ճիւղապարտականացեալ իրարմարտութեամբ  
 ներսով եւ յափշտակեցուցիչ հրապարչութեամբ կ'ստանան իրենց  
 ձեռքն ինկնող խեղճ եւ ողորմելի երիտասարդները . ահ, քանի քանիներու հանդպած եմ ես, որոնք  
 գլուխներնուն մազերը փետտակելով կ'անիծեն այն ժամը՝ երբ  
 առաջին անգամ իրենց ոտքը կոխած է այն սուներէն մէկուն դռնէն ներս : Մի՛ խարուիք, երիտասարդներ,  
 անառակ կիները ձեր կարծածին չափ գեղեցիկ եւ մաքուր չեն,  
 եւ ճշմարիտ կըսեմ թէ՛ թէ՛ որ անոնցմէ մէկը (թէ եւ ամենէն գեղեցիկը լինի) լոյսի  
 մէջ քննես եւ քու փնտրած երջանկութեանդ աղբիւրը տեսնես՝  
 պիտի սոսկաս զգուիս եւ երդմամբ պիտի հառանաս այն  
 կարծեցեալ հրեշտակէն : Աթէ բնութեան մէջ ամենազգուելի  
 բան մը կայ՝ ան ալ անառակ կիներ է, որ իւր սղծութեամբ  
 ազատտած ամբարիշտ մարմնայն վրայ կը գրկէ որ եւ իցէ  
 մէկը որ իրեն կուգայ :

Հոս խօսքերնիս կը վերջացնենք՝ թողլով որ քիչ մըն ալ  
 Հայազգի բժիշկ Անդրէաս Փոփովիչը խօսի\* :

« Ով որ բնական ցանկութիւնը կատարելու ատենը  
 բնութեան օրէնքներուն եւ կանոններուն շի հետեւիր,  
 ով որ կանուխ ու անչափ հեշտութիւններով մարմինը  
 կատարեալ հասունութեան հասնելու շի թողուր, անանկ  
 որ արեւին սաստիկ տաքէն երած սունկի մը պէս կը թորմի,  
 վերջապէս ով որ բնական ցանկութեան վախճանին կամ  
 նպատակին դէմ կը գործէ ու ճամբայ կը բռնէ,  
 նայն ցանկութիւնը կատարելու ատենը՝  
 ծննդեան ու մարդկային ազգին շատնալուն արգելք  
 կը դնէ, ու իր մարդկութիւնը անբնական գիճութեանով  
 եւ ուրիշ բնութեան դէմ ըլլող անասնական ու  
 ալ աւելի գէշ մեղքերով կ'արհամարհէ, ան

\* Ամենաանկեղծ պաղատանք կը խնդրեմ որ ամեն Հայ այս երևելի բժշկին Արտուր Երիտասարդութեան գիրքէն հատ մը առնէ՝ վասն զի այն այնպիսի դիրք մի է, որոյ թէ որ մէկը հնազանդութեամբ հպատակի՝ շատ մեծամեծ օգուտներ անշուշտ կը քողէ :

« մարդը իրաւցրնէ մոլի ու բղջախոհ կ'ըսուի : Թէ որ  
 « մարդաստարանութիւնը ու գողութիւնը մոլութիւն է՝  
 « պէտք է որ բղջախոհութիւնն ալ մոլութիւն ըլլայ ,  
 « ինչու որ բղջախոհութենէ աւելի բան մըն ալ մարդուն  
 « բարոյական վախճանին դէմ չի կրնար ըլլալ , ասկից 'ի  
 « զատ բան մ'ալ անիկայ ամեն աղէկ գործքերու եւ  
 « բարի բարի վայելմունքներ ունենալու անյարմար ու  
 « անընդունակ չի կրնար ընել , ու մարդկային բնութեան  
 « կամ մարդկութեան ներքին ծուծը ապականել ու չոր-  
 « ցրնել : Թէ որ մարդ իր ուրիշ մարմնաւոր կարօտու-  
 « թիւնները կատարելու մէջ ռահմանուած չափն ու  
 « կարգը անցնելու , ու աշխարհքիս վրայ ուտելէն , խը-  
 « մելէն ու քնանալէն ուրիշ բան չ'ընելու , չի գիտնալու  
 « ու չի խօսելու ըլլայ , ուրիշ մարդկան առջին ողորմելի  
 « ստեղծուածի մը պէս արհամարհելի կ'ըլլայ նէ , հա-  
 « սրա ինչչափ աւելի արհամարհելի պէտք է ըլլալ ան  
 « մարդը , որ միայն անանկ վայելմունքի մը ետեւէ կը  
 « վաղէ՛ որ մարդկային բնութեան այնչափ հարկաւոր  
 « չէ , ինչպէս ուտել խմել քնանալը , ու որուն մէջը եւ  
 « զած չափազանցութիւնը մարդուն ուժին ու պատուոյն՝  
 « ուտելու խմելու ու քնանալու մէջ եղած չափազան-  
 « ցութիւնէն շատ աւելի մնաս կ'ընէ . դարձեալ կ'ըսեմ ,  
 « ինչչափ աւելի արհամարհելի պէտք է ըլլալ ան մար-  
 « դը՝ որ միայն մարմնաւոր հեշտութեան վրայ կը խօսի ,  
 « միայն անոր վրայ կ'երազէ ու կը մտմտայ , ու իր բոլոր  
 « կենացը ուժը ու ամեն հոգեղէն գորութիւնները մի-  
 « նակ աս անասակա՛յ յօժարութեան ու գրգռին վրայով  
 « կը պտըտին ու կ'ըզբաղին : Աստուծո՛ւ վայրկենական  
 « հեշտո՛ւնէ՛ւ զգացմունքէ մը գրգռելով կը գործէ . իսկ  
 « մարդը անոր համար կը գործէ՛ որ ըրածին կամ գոր-  
 « ծածին աղէի ըլլալը , այսինքն եւքի եւն եւեհայ կամ հե՛մ-  
 « կո-ան ծամանակին ու ազագային համար կամ եւ հեքե-անո՛ւնը աղէի  
 « ըլլալը կը ձան չնայ . մարդը միայն զգացմունքին հե-  
 « տեւելով չի գործեր , հապա բանաւոր ընտրութիւնով

» դատում ընելով կը գործէ . իր երջանկութիւնը կը  
 » պահանջէ՝ որ ինքը օրէնք ու կարգ ճանչնայ :

» Բայց հիմակուան ատենս օրէնք ու կարգ ճանչցողը  
 » ո՞ւր է : Իր բնական վախճանին՝ բնութեան որոշածին  
 » համաձայն ո՞վ կ'ապրի : Սիրոյ պտուղները ո՞վ բանա-  
 »ւորապէս ու չափով կը վայելէ : Նոյն իսկ մարդկու-  
 » թիւնը՝ քննող աչքով մը մարդկային ազգը զննելու ըլ-  
 » լայ , իր պատկերքին տեսութենէն պիտ'որ չի սոսկայ  
 » մի : Մարդ սա կտորիս մէջը իր արժանապատու-  
 » թիւնը՝ իր վախճանը բողորովին մտցեր է . ալ իր գոր-  
 » ծողութիւններուն վրայ տէր չէ , մի միայն մարմնա-  
 » կան ցանկութիւնին գերի եղեր է :

» Արդ՝ ո՞վ կրնայ համրել եւ ուղղել կամ պակսեցը-  
 » նել ան ամեն չարիքը՝ որոնք այս ապականիչ ու մար-  
 » դասպան ախտը մարդկային ազգին վրայ կը բերէ :  
 » Ինչու որ սա ախտով մարդկային մարմինին աղուո-  
 » լութիւնը , որն որ ( այսինքն մարդկային մարմինը )  
 » փոքր աշխարհ կ'անուանի , ու աշխարհքիս ամեն կերպ  
 » աղուորութիւնն ու զօրութիւնը իր վրայ կը բովանդա-  
 » կէ , ապականուելով , այն մարմինը կեանքի ու մահ-  
 » ուան մէջ մնացած անձանաչելի բան մը , դողդղացող,  
 » խեղանդամ ու տկար ստեղծուած մը կ'ըլլայ : Ա՛վ որ  
 » բուն ատենէն առաջ ու շատ հեղ մարմնոյ ցանկութիւ-  
 » նը կը գրգռէ , բուն ատենէն առաջ ու շատ անգամ  
 » ան ազնիւ հիւթերը անբնական գիճութիւնով եւ ու-  
 » թիչ անկարգութիւններով կը մսխէ կը կորսնցունէ , ան  
 » մարդը բողոր իր կենացը հիւթերուն առատութիւնը  
 » գէպ 'ի ծննդական անդամները կը քալեցնէ . ասով  
 » կենաց ամեն սնուցիչ ու նորոգիչ զօրութիւնները չա-  
 » փէ աւելի գործելու կամ ազդեցութիւն ընելու կ'ըս-  
 » տիպին , որպէս զի ծննդական անդամներուն օգնու-  
 » թիւն ընեն , ու ասոնց սպառածին կամ մսխածին տե-  
 » ղը լեցնեն : Աս աստանկ ըլլալով՝ մարմինին ուրիշ գոր-  
 » ծարաններուն ու մասերուն հարկաւոր եղած արիւնը ,

» որն որ կենաց ու աճելու աղբիւրն է, անոնց չ'երթար,  
 » ուստի եւ իրենց սնունդը կը պակսի, պղտիկ՝ անկա-  
 » տար ու տկար կը մնան: Մարմինը իր բնական մեծու-  
 » թեանը չափին չի հասնիր, ու աս մոլութիւնի ծառայ  
 » ԸԼԸՂը մարդկային կերպարանքին աղուորութիւնը  
 » կորսնցունելով՝ խեղ ու տկար կը մնայ, կամ չոր կը-  
 » մաղքի մը պէս կը պտըտի: Հեշտասէր մարդը իր աչ-  
 » խութութիւնը կը կորսնցունէ. իր զգայարանքը բութ  
 » կ'ըլլան, ամենէն աւելի աչուրները պաղած, միտքը  
 » հաստ ու երեւակայութիւնը անկարգ կ'ըլլայ. զգայու-  
 » նութիւնը բնական եղանակէն դուրս կ'ելլէ, կամ չա-  
 » փէն աւելի շուտ կը գրգռի, կամ բոլորովին թմրած  
 » կ'ըլլայ. նաեւ մկունքներուն զօրութիւնը կը կորսուի:  
 » Հեշտասէր մարդը քիչ մը շարժում ընելու ըլլայ կամ  
 » քալէ, կը յոգնի. պղտիկ դործքի մը մէջ մտնելու  
 » ըլլայ, կը քրտնի. բազկ'երակին զարնուածքը կարճ  
 » ու շուտ կ'ըլլայ. թոքը տկար ու արտաքոյ կարգի  
 » զգայուն կ'ըլլայ. նաեւ ասանկ մարդը արիւն թքնե-  
 » լու եւ սոսկալի թոքացաւի կամ բարակ ցաւի յարմա-  
 » թութիւն ու սլաորաստութիւն կ'ունենայ. ստամոքսն  
 » ալ կը տկարանայ, կերած կերակուրներէն մնաս ու  
 » նեղութիւն կ'իմանայ, աղիքը պնդութիւնի կամ թան-  
 » չի (խալի) յարմար կ'ըլլան. մարմինին մորթը տըժ-  
 » գոյն ու դեղին կ'ըլլայ, կը խորշոմի (սորձիկ կ'ըլլայ)  
 » ու ան ատենները կամ տարիները՝ երբոր չափաւորու-  
 » թեամբ ապրող երիտասարդ մը կ'սկսի զօրաւոր ու  
 » պնդակազմ այր մը երեւալ, հեշտասէր երիտասարդը  
 » կանուխ ծերութեան մտնենալով կը թարշամի: Քանի  
 » քանի անձինք հազիւ երեսուն տարուան ըլլալով՝ ծե-  
 » րի պէս կնճռեալ ճակատով, խորունկցած երեսներով  
 » ու ներս գացած տկարացած աչուրներով կը պտըտին:  
 » Աւ երբ որ ասանկ մարդիկ աշխարհք մտնելով կամ  
 » ամուսնանալով իրենց ազգը աճեցունելու կ'աշխատին,  
 » անոնցմէ ինչ պատու կրնայ յուսացուիլ: Ասանկ մարդ-



» կան զաւակները տկար մարմնով աշխարհք կուգան ,  
 » ու կարծես թէ ունեցած կեանքերնուն վրայ առջի  
 » ամիսներն ալ ամենեւին ուրախութիւն ու զուարճու-  
 » թիւն չեն զգար . թէ որ կեանքերնուն առջի օրերը  
 » մահը վրայ հասնելով՝ անոնք քաշելու ցաւերնէն կ'ա-  
 » զատէ : Աս խեղճերը աշխարհք գալէն ետքը՝ կ'ամ  
 » զլուխնին ջուր լեցուած ըլլալուն՝ կանուխ մահուամբ  
 » կը մեռնին , կ'ամ խոյլ («ւրաճ») ախտէն կը մաշին , եւ  
 » կ'ամ ոսկրներնին կակուղ կ'ըլլան , ու անով իրենց մար-  
 » մինին ձեւն ու կերպարանքնին այլակերպ կ'ըլլայ : Իսկ  
 » թէ որ կանուխիէկ մեռնելէն մեծ դժուարութիւնով  
 » խալըսելու ըլլան , աճելնին ու մեծնալնին ձիւնի տակ  
 » մնացած տունկերուն աճելուն կը նմանի . մարմիննին  
 » մարած պաղած ու տկար , ու միտուընին հաստ ու  
 » տարտամ կ'ըլլայ . ու որչափ որ կ'ապրին ու իրենք ալ  
 » զաւակ կը ծնանին , իրենց ծնողացը անխելքութեանը  
 » անկարգութեանը յիշատակը աշխարհքիս վրայ մըշ-  
 » տընջենաւոր կը թողուն :

» Արդ՝ թէ որ ասանկ հեշտութեան ետեւէ ինկած  
 » մարմնամուլ մարդ մը բուն ատենին աղէկ չի խրատ-  
 » ու իր , իր մուլութիւնը շտկելու համար դեղ չի փնտը-  
 » ուեր , ու իր անկարգ ցանկութեանը չափ չի դներնէ ,  
 » յայտնի բան մըն է՝ որ օրէ օր իր կործանումն ու կո-  
 » րուստը կը պատրաստէ : Չղերուն չափէ աւելի ձրկ-  
 » տումն ու տկարութիւնը սոսկալի հիւանդութիւններու  
 » ճամբայ կը բանան ու հիմ կը դնեն , ինչպէս են ախոն-  
 » դանտութիւն («Գաբ» «է՛լ») , կատաղութիւն , լուսնո-  
 » տութիւն կամ թալկացում («աբ») . ասոնցմէ՝ ի զատ  
 » երկարատեւ ջերմը ասանկ մարդու վրայէն պակաս  
 » չ'ըլլար , անանկ որ ողորմելին ասդին անդին պար-  
 » տող դիու («մեռելի») մը նման կ'ըլլայ . արտաքոյ կար-  
 » գի մարմնոյ տաքութիւնը , գիշերները չափէ աւելի  
 » քրտինքը ու սաստիկ փորքշուքը խեղճը անդադար կը  
 » նեղեն , կունակին վրայ ան կերպ զգացում մը կ'ունե-

» նայ , ինչպէս թէ մրջուներ ( Խաբըճաներ ) կը պտըտին ,  
 » կամ թէ մէջը բոլորովին պարսպած է . ոտուրները  
 » կ'ուռին . ինքը բոլորովին ընդհանուր տկարութեան  
 » մը մէջ կ'իյնայ , ու վերջապէս հաշուէ համ կամ ծի-բո-նի-ն  
 » ըսուած հիւանդութիւնով կը մեռնի :

» Ստոյգ է՝ որ ամեն հեշտասէր մարդ բոլոր աս ցա-  
 » ւալի հետեւանքները՝ մէկէն կամ առջի տարիները  
 » շիմանար , բայց ով որ կը կարծէ՝ թէ ասանկ հետե-  
 » ւանքներէն բոլորովին կրնայ ազատ մնալ , մեծապէս  
 » կը սխալի : Աս կտորիս մէջը շատ մեծ տարբերութիւն  
 » կ'ընէ հեշտախտական գործքերը սկսելու ժամանակը  
 » ու անոնք կատարելու չափը կամ աստիճանը . որչափ  
 » աւելի ուշ կ'սկսուի աս ախտը ու որչափ աւելի քիչ  
 » կը գործուի , մնասն ալ այնչափ աւելի քիչ կ'ըլլայ :  
 » Կան անանկ մարմիններ ալ՝ որ արուաքոյ կարգի մեծ  
 » արտադրիչ գորութիւն ունին , ու երկայն եւ մեծ աշ-  
 » խատութեան կրնան դիմանալ առանց երեւելի մնաս  
 » մը կրելու : Բայց շիտակը ըսելով , շի կայ հեշտասէր  
 » մարդ մը , որ աս բանիս մէջը բոլորովին անմնաս ու  
 » անպատիժ մնայ , թէ եւ իր երիտասարդութեան ա-  
 » տենը չարաչար մնասներէն ազատ մնայ , ծերութեան  
 » ատենը շատ մեծ խեղճութիւն ու նեղութիւն քաշելու  
 » կը պարտաւորի : Ժամանակէն առաջ ուժէ կ'իյնայ ,  
 » մարմինը կը կծկի վար կը ծռի , զգայարանքներուն  
 » ուժը կանուխակէ կը կորսուի , անդամները կը դող-  
 » դողան , քալուածքը դժուար ու դողդոջուն կ'ըլլայ ,  
 » եւայլն : Բնութիւնը ինք իրմէ չէ սահմաներ՝ որ մարդ  
 » իր ծերութիւնը հիւանդութիւններու մէջ անցընէ .  
 » մանաւանդ ան տարիներու կամ հասակի մէջ , որն որ  
 » հիմակուան ծերերը շատ մեծ նեղութիւններով ան-  
 » ցընելու կ'սկսին : Ա՛վ որ իր երիտասարդութեան օրե-  
 » րը խելքով ու առաքինութիւնով անցուցեր է , ան  
 » մարդը ծերութեան ատենն ալ իրրեւ երիտասարդ  
 » կրնայ ապրիլ ու առողջութեամբ օրերն անցընել : Զօ

» րաւոր ծերի մը հարցնենք , թէ ինչո՞ւ համար իր ծե-  
 » րութեան ատենը այնչափ ուժով է : Պատասխան կու-  
 » տայ՝ որ ես հիմակուան երիտասարդներուն պէս կեանք  
 » չեմ անցուցեր . երիտասարդութեանս ատենը կենացս  
 » աղէկ հիւթերը կրցածիս չափ խնայելով գործածեցի .  
 » քսան տարուան եղած ատենս դեռ չէի գիտեր՝ որ  
 » երկու սեռ մարդ կայ :

» Անկարգ ու անչափ հեշտախօսութեան խիստ զար-  
 » հուրելի հետեւանքներուն մէկն ալ մաշողական ախտն  
 » ( Քրէն + Ֆարազ ) է , որն որ մարդկային ազգին վրայ եկող  
 » պինդ սոսկալի ցաւերուն մէկը կը սեպուի : Ասիկայ  
 » իրաւցնէ անանկ ապականիչ ժանտախտ մըն է , որ  
 » մարդուն մարմինին ծուծը կը չորցնէ կ'ուտէ . բռնած  
 » մարդը գարշելի թունաւոր անասունի մը կը դարձնէ ,  
 » անոր աղուոր կերպարանքը զգուելի ցուցանքի մը կը  
 » փոխէ , ու Աստուծմէ տրուած անէծքի մը պէս մարդը  
 » կամ մարդկային ազգը կը մաշէ :

» — Ի՞նչ են , կ'ըսէ Հուֆէլանտ , ի՞նչ են՝ աս մա-  
 » շողական ախտին նայելով՝ մարդուս համար խիստ  
 » մահաբեր թոյներն ալ : Միայն սա ախտը կեանքին  
 » բուն աղբիւրը կը թունաւորէ , սիրոյն պինդ անոյշ  
 » վայելմունքը կը լեղիցընէ , մարդուն սերմը կամ սկիզ-  
 » բը գոյանալու ատենէն կ'ապականէ ու կը մեռցնէ ,  
 » ուստի եւ ապագայ սերունդներու վրայ ալ իր ազդե-  
 » ցութիւնը կ'ընէ , հանգիստ ու բարեբաղդ աներու մէջ  
 » կը մտնէ , զաւակները ծնողքէն ու ամուսինը ամուսի-  
 » նէն կը զատէ , ու մարդկութեան պինդ սուրբ կապե-  
 » ըրը կը քակէ : Աւրիշ բան մ'ալ կայ , այսինքն այն սոս-  
 » կալի ախտը կամաց կամաց ու իբր թէ անզգալարար  
 » բանող կամ ազդեցութիւն ընող թոյն մըն է , ու ամեն  
 » անգամ մարմնոյ մէջ մտած ատենը շուտ մը զօրաւոր  
 » ու յայտնի նշաններով շիմացուիր ու չի ճանչցուիր :  
 » Մէկը կրնայ սա թունով բոլորովին ապականիլ առանց  
 » գիտնալու թէ ադ չար հետեւանքը ուսկից յառաջ ե-

» կան . հասարակօրէն աս ախտը վատորկողը՝ անիկայ  
 » աղէկ մը մարմինին վրայ տարածուելէն ու խորունկ  
 » արմատ ձգելէն ետքը՝ դեղ փնտռելու կ'սկսի . նաև  
 » առանց ուզելու ու գիտնալու իր ախտին թոյնը ու  
 » ընկերուն ալ կը հաղորդէ : Շատ հեղ ալ մարդ չի գի-  
 » տեր թէ արդեօք աս ախտէն բուժորովին ազատեր է  
 » թէ չէ : Ու թէ որ աս ապականարար ախտը հեղ մը  
 » իր բուն սատկութեանը աստիճանը հասնելու ըլլայ ,  
 » անկից ետքն ալ ի՞նչ սոսկալի աւերածներ չի գործեր  
 » մարդուն մարմինին վրայ : Բոլոր մարմինը գարշելի  
 » վէրքերով կամ պալարներով կը ծածկուի , ոսկրները  
 » կը մաշին , մարմինին զանազան մասերը կ'անալիտա-  
 » նան կամ կը մեռնին , քիթին ու քիմքին ոսկրները կը  
 » փտտին , ու անով մարդուն դէմքին վայելչութիւնը  
 » ու աղուորութիւնը կը կորսուի :

» Այսին խօսքով ըսեմ , մաշողական ախտին թոյնը  
 » իր մէջը կը բովանդակէ խիստ զօրաւոր թոյներուն  
 » տուած ցաւերը , տառապանքը , երկարատեւ նեղու-  
 » թիւնն ու վախը : Եւ ահա ասանկ սոսկալի թոյնը ու  
 » մանք կ'արհամարհեն ու բանի մը տեղ չի դնելով ,  
 » կարծես թէ անիկայ թեթեւ հազի կամ հարբուղիսի  
 » ( նէշուէն ) մը պէս չնչին բան մը կը սեպեն , անանկ  
 » որ պինդ յարմար դեղերը անոր դէմ 'ի գործ դնելու  
 » կը դանդաղին : Իրաւցնէ սիրտս կտոր կտոր կ'ըլլայ ,  
 » երբ որ ասկից ետքը դալու ժամանակները մտմտա-  
 » լով՝ կը տեսնեմ՝ որ աս սոսկալի թոյնը ասանկ առանց  
 » արգելքի առաջ երթալով ու տարածուելով , պինդ  
 » պատուաւոր ու անմեղ դերդաստաններն ալ ( տղաք  
 » նայող աղախիններու ու ծիծմարերու ձեռքով ) ան  
 » թոյնէն պիտ'որ ապականին ( «ուէն» ) , ու անով շատ  
 » անմեղաց տները առանց իրենց յանցանացը աս չա՛ր  
 » ախտին մնասները պիտ'որ տեսնեն — :

» Ահա ասոնք են անկարգ ու անչափ հեշտութեան  
 » վայելմունքներուն պատճառած բնական կամ ֆիզի-

» քական չարիքն ու մեղսաները . հիմա տեսնենք բարոյ-  
 » յական մեղսաները :

» Ինչպէս որ հեշտասէր մարդուն մարմինը կը թար-  
 » չամի ու կ'ապակահանի , անանկ ալ անոր հոգեկան զօ-  
 » րութիւնները բոլորովին կը կորսուին : Ինչպէս որ բո-  
 » լոր գործարաններուն կազմուածքին ամեն ջղերը ի-  
 » րենց զօրութիւնը կը կորսնցունեն , սոյնպէս ալ անոնց  
 » կեդրոնը , որ է ուղեղը , իր զօրութենէն բոլորովին  
 » կ'իյնայ : Ասանկ մարդը բնութեան ուրիշ ամեն ուրա-  
 » խութեանը կամ վայելմանցը ու երջանկութեանը հա-  
 » մար մեռածի պէս կ'ըլլայ . ճշմարտութեան , ազու-  
 » րութեան ու աղէկութեան համար փափագ ու զգա-  
 » ցում չունենար , ու իր բոլոր զօրութիւնը ամենեւին  
 » ուրիշ բանի չի բանեցներ՝ բայց եթէ հեշտական բա-  
 » ներու : Իր միտքը թանձր , բարքը կամ վարմունքը  
 » ( նկարագիրը , ԲԵՆԷՊԸ ) տկար ու փոփոխական , ու իր  
 » հոգին կամ միտքը անհաստատ ու աստանդական կ'ըլ-  
 » լայ . իր վրան հաստատուն ու կանոնաւոր մտմտութե-  
 » ներ չեն տեսնուիր . ինք իրմէ աղէկ ըլլող ու աղէկ  
 » հետեւանքներ կամ սրտուղներ ունեցող բանը չի փըն-  
 » տրուեր . իր ըրած գործքերը բանաւոր ու ճարտիօրէն  
 » գործքեր չեն ըլլար , հապա միայն որ բանը որ զու-  
 » արձակի ու հեշտացուցիչ է՝ անիկա զինքը կը շարժէ ու  
 » կը յափշտակէ . միայն ան բաներուն կը փաթտուի ու  
 » ետեւէն կ'ըլլայ , որոնք ներկայ վայրկենի համար իր  
 » զգայարանքը կը գրգռեն . ուստի միայն անանհաբար կամ  
 » անհանճէն կը գործէ : Անանկ գործողութիւններու՝ որոնց  
 » համար քիչ մը աշխատութիւն , ինքզինքը յաղթել ,  
 » ու մահացուցում հարկաւոր է , բոլորովին անկարող  
 » կ'ըլլայ : Ասկից 'ի զատ , սիրոյ մէջ անկարգ ու անչափ  
 » ըլլալը բաւական չի սեպելով , ուտելու խմելու մէջ  
 » ալ չափազանց կ'ըլլայ , ինչու որ իր տկարութեանը  
 » զգացմունքը հասարակօրէն անկարգ ու անչափ վա-  
 » յելմունքով՝ մանուսանդ բարկ կամ ոգելից խմելիքներ

» խմելով իրմէն հեռացնելու կ'աշխատի , որպէս զի իր  
 » անկարգ վարմունքին չար խիղճը զգայարանքներուն  
 » թմրեցուցիչ գինովութեանը մէջը թաղէ կորսնցունէ :

» Ասանկ մարդու մը հետ ո՞վ կրնայ բարեկամութիւն  
 » ընել . ասանկ մարդը իր բարեկամին գաղտնիքը դուրս  
 » կը հանէ , անիկայ կը խտրէ , իրաւունքն ու արդա-  
 » րութիւնը կը ծախէ . այսինքն ատակի ու շահի համար  
 » արդարութենէ կը հեռանայ , ու իր անսանձ ցանկու-  
 » թիւնը զանազան կերպով կատարելու միջոցներ ու  
 » ճամբայ գտնելու համար իր մեծերուն ու հայրենեացը  
 » դէմ գող ու մատնիչ կ'ըլլայ :

» Ահա այն սքանչելի սէրը , որն որ բնութեան կա-  
 » նոնացը հետեւելու ըլլայ՝ ուրախութիւն ու կեանք  
 » կուտայ ու մարդկային կենաց արեւը կ'ըլլայ , այն ան-  
 » կարգութիւններով զարհուրելի հրէշքի կամ ցուցանքի  
 » մը կը դառնայ , որ իր թունաւոր շնչովը մարդկային  
 » ազգը Ֆիզիգապէս ու բարոյապէս կ'ապականէ , ու  
 » թշուառութեան , տանջանքի ու մահուան գիրկը կը  
 » տանի կը նետէ : Աս ապականիչ ժանտախտը միայն  
 » ան ատենը կրնայ արգելուիլ՝ կամ գոնէ չափաւորուիլ ,  
 » երբ որ իւր ազրիւրը կը գոցուի , այսինքն երբ որ իր  
 » պատճառը մէկդի կը վերցուի : Մարդուս երջանկու-  
 » թեանը համար շատ հարկաւոր բան մըն է՝ որ աս ան-  
 » կարգ հեշտախտութեան պատճառները ծնողաց , դաս-  
 » տիարակներուն կամ տղոց կրթիչներուն , ու իշխան-  
 » ներուն առջեւը դրուին , որպէս զի ամեն զօրութիւ-  
 » նով անոնց ճար ընելու աշխատին , ու իրենց զաւակ-  
 » ները , աշկերտներն ու հպատակները աս վտանգաւոր  
 » ճամբէն , որն որ անտարակոյս մշտնջենաւոր կորըս-  
 » տեան մէջը կը տանի , ետ քաշեն ու դուրս հանեն » :  
 ( Արեւ 166-181 ) :

Մեր Հայազգի բժշկին այս խօսքերը ընթերցողնե-  
 րուս առջեւ դնելէս յետոյ , պարտաւոր կը գտնեմ ինք-  
 ցինքս քանի մը խօսք ալ անոնց ընելու , որոնք բնակա-

հարար այս տեսարակս կարողալէն վերջը պիտի հարցը  
նեն թէ « հապա ի՞նչ ընեն երիտասարդները, միթէ ա-  
մուսնանան առանց իրենց վիճակը ապահովցնելու, ա-  
ռանց բաւական հարստութիւն դիզելու, առանց նա-  
յելու որ առած աղջիկը հարուստ, հաւատարիմ եւ  
գեղեցիկ լինի »:

Երիտասարդ ընթերցողացս այս հարցումներուն  
պարտիմ պատասխանել, միայն թէ պէտք է որ ամեն  
մէկ հարցման զատ զատ պատասխանեմ:

1. Թէ երիտասարդները ամուսնանալու է՞ն մի: Ա՛յլ ինչ կ'ու-  
զէ թո՛ղ ըսէ, իսկ ես կ'ըսեմ, ամեն երիտասարդ երբ  
քսան եւ չորս տարեկան եղած են՝ պարտաւոր են աւ-  
մուսնանալ, քանի որ բնութիւնը իրենց մէկ կիւրք մը  
տուած է, որոյ օրինակ որ դործադրութիւնը մի միայն  
ամուսնութեան մէջ հնարաւոր է կատարել . . . ես այս  
սկզբունքս ետ կ'առնում թէ որ մէկը կրնայ հաստատ  
տել թէ ամուսնանալէն 'ի զատ կայ ուրիշ միջոց մը ու-  
րով ցանկական կիւրքը կը յադենայ առանց մարդկային  
կազմութիւնը վտանգի ներքեւ դնելու:

Գուցէ թէ մէկը ըսէ որ « Կը զսպեմ իմ ցանկու-  
թիւնս » բայց ես կը պատասխանեմ թէ Ա. « Ըսելը դոր-  
ծադրել չէ » Բ. « Շատ մեծ ապուշ մի լինելու է մէկը  
որ կարենայ իւր ցանկութիւնը զսպել, վասն զի այսպիսի  
մէկը անշուշտ պակասաւոր լինելու է որ բնութեան ա-  
մենէն մեծ միզումը չ'զգար » . Գ. « Բնութիւնը բռնու-  
թեան հարատակեցնելը բնութիւնը եղծել է եւ հետե-  
ւարար աս ալ իր անթիւ վտանգներն ունի »:

2. Թէ երիտասարդները ամուսնանալու էն առանց իրենց վիճակ  
ապահովցնելու: Այս հարցման իմ մի միայն պատասխանս  
է թէ՛ երիտասարդ մը որ մինչեւ քսան եւ չորս տարե-  
կան եղած ասունը դժբաղդարար չէ կարողացեր օրա-  
կան ապրուստ մը գտնելու միջոց մը ձեռք անցնել, ա-  
նանկին համար ուելի յոյս կայ ամուսնանալէն վերջը  
համետ շահ մը ձեռք բերելու, եւ հաւատարիմ կո-

դակցի մը հետ երջանկութեամբ եւ հանգստութեամբ  
ապրելու :

3. Թէ երեքասարտե՛րը ամուսնանալու էն առանց հարստութեան  
տե՛ղ- : Յիրաւի ես չեմ գիտեր թէ փոխադարձ սէրէն  
'ի զատ մեծ հարստութիւն կրնայ մի գտնուիլ , եւ ամե-  
նեւին չեմ կրնար գիտնալ թէ ոսկիի առատութիւնը ինչ  
կրնայ ընծայել ամուսնացեալներու . ո՛հ , միթէ բաւա-  
կան համոզուած չեմք թէ՛ ոսկիին առատութիւնը չէ  
թէ միայն երջանկութիւն չի կրնար մատակարարել ըն-  
տանեաց մէջ , այլ նաեւ խիստ շատ անգամ նոցա թըշ-  
ուառութեանը պատճառ կը լինի , եւ ես շիտակը մեծ  
երանութիւն չեմ տար հարուստ երիտասարդի մը հետ  
ամուսնացող ազջկան մը , վասն զի շԱՐՈՒՍԵ ԵՄԵՆ ԿՈՂՄԱԵ  
ՇԱՐՈՒՍ ԼԻՆԵԼ ԿԸ ԲԱՂՁԱՅ ՄԻՇՏ : Սէ՛ր , իմ սիրելի ընթեր-  
ցողս , սէ՛ր միայն հարկաւոր է ամուսնանալու համար ,  
եւ հաւատա՛ ինձ որ թէ որ երիտասարդ մը եւ ազջիկ  
մը , թէ եւ աղքատ լինին , փոխադարձ եւ շԱՍՏԱՏՈՒՆ  
սիրով ամուսնանան մէկզմէկու հետ՝ իրենց համար եր-  
ջանկութեամբ եւ խաղաղութեամբ ապրիլը շատ հեշտ  
եւ գիւրին կը լինի . . . երկու իրար սիրող բարեկամնե-  
րու համար մէկ նստարանն ալ բաւական է , եւ մէկը  
որ կ'ուզէ երկինքին օրինակը տեսնել , թո՛ղ մտնէ այն  
աղքատիկ սենեակին մէջ , ուր իրար ճշմարտապէս սի-  
րող այր եւ կին նստած իրենց ջուր ու հացը կ'ուտեն ,  
երբեմն երբեմն քաղցր հայեցուածք մը նետելով իւր-  
եանց մանկան՝ որ անմեղութեամբ կը հանգչի առողջա-  
րար ոչխարի մը մարթին վրայ . իսկ ասոր հակառակը՝  
գնա՛ այն մեծատան պալատը եւ տես թէ ատելութիւնը  
ինչե՞ր չ'ըներ հոն , ոսկիի առատութիւն կայ հոն , այո՛ .  
բայց սե՛ր չիկայ . ինչու որ այն ընտանեաց ամեն մէկ  
անդամները ամեն բան շուայլութեամբ ունենալով՝ վա-  
յելման զգացմունքը կորուսած , ինչ ընելնին չի գիտցող  
յիմարները դարձած են . . . ահա՛ դժոխքն ալ հոս է :  
Իրա՛ւ է , ես չեմ կրնար ուրանալ ամենեւին թէ Սէ՛րը



երբեմն արքունեաց, պալատներու եւ մեծատուններու  
բնակարաններու մէջ կը մտնէ . . . բայց ՆՐԲԵՄՆ միայն,  
վասն զի ուր սակին կը խօսի՝ Սէրը կը լռէ հան, ուր  
սակին կը տիրապետէ՝ Սէրը կը փախչի անկից. այն-  
պիսի շքեղ եւ ոսկելից շէնքերու մէջ տիրող ամենէն  
երեւելի բանը շողոքորթութիւնը եւ արտաքին քաղա-  
քականութիւններն են: Մի խաբուիր ամենեւին, իմ  
սիրելի ընթերցողս, երբ կը տեսնես հարուստներուն  
զուարթ դէմքերը, գիտցիր որ անոնք քեզի ծայր ու  
ծանակ չի լինելու համար միայն խնտում երես եւ  
գոհ կ'երեւան, հաւատա՛ ինձ, որ նոցա կուրծքին մէջ  
այնպիսի որդեր կան, որոնց ամեն մէկ խածուածքը՝  
մահէն ալ դժնդակ է եւ թունալից:

Արդ՝ երիտասարդ մը ամուսնանալու համար՝ ունե-  
լի յարմար է, թէ որ չափաւոր ապրուստ մը շահելու  
տրամադրութիւնն ունի . . . իրաւ է որ աղքատու-  
թիւնը խիստ դժնդակ է, բայց սա ալ իրաւ է որ՝ աղ-  
քատութեան ծանրութիւնը շատ կը թեթեւայ՝ թէ որ  
սէրը տիրէ ընտանիքի մը մէջ:

4. Թե երեքսարդները հարուստ աղջիկներ ինքեւս չ'են, հե-  
քերին ամուսնանալու համար: Ես ամենեւին ասոր դէմ բան  
մը չեմ կրնար ըսել. թէ որ անհնար չէ հարուստ աղ-  
ջիկ մը առնել՝ առաջին օժիտը սէր լինելով: Երիտա-  
սարդ ընթերցող՝ թէ որ կենացդ երջանկութեանը եւ  
խաղաղութեանը կը ցոանկաս՝ դու զքեզ ճշմարտապէս  
սիրող աղջիկ մը ամուսին ընարէ, կ'ուզէ հարուստ լի-  
նի, կ'ուզէ աղքատ. եւ վստահ եղիր ինձ որ, այս աշ-  
խարհիս մէջ ամենէն մեծ թշուառութիւնը պիտի ճա-  
շակես, թէ որ աղջիկ մը միայն իւր հարստութեանը  
համար առնելու լինիս, ինչու որ՝ հարուստ աղջիկները  
շատ անգամ հպարտ, ինքնահաւան եւ դիմացիներին  
մարդու տեղ չի դնողներ կը լինին, եւ շիտակը խօսե-  
լով, գիշատիչ թռչունի մը ճանկերուն մէջ իյնալը նա-  
խապատիւ է, քան թէ սիրոյ օտար՝ իւր հարստութեամբ

բը փարթամացեալ, ճոխութիւն, փառաւորութիւն  
 փնտռող աղջկան մը հետ ամուսնանալ. վերջապէս ա-  
 ուաջին կարգի անստութիւն կ'ընեն այն երիտասարդ-  
 ները՝ որոնք ամեն բանէ առաջ աղջկան մը ստացուած-  
 քին ցուցակը կը պահանջեն, եւ շիտակը թէ որ եւ աղ-  
 ջիկ մը լինէի՝ շատ զգոյշ պիտի լինէի որ եւ իցէ յարա-  
 բերութիւն ունենալ այնպիսի մէկու մը հետ որ իմ ու-  
 կիներուս վրայ դրած է իւր յոյսը, եւ նոցա վրայ տըն-  
 կած է իւր աշուրները: Կ'մասնաւոր կարծիքէս աւելի  
 անթիւ անհամար փորձեր մինչեւ այսօր յայտնած են  
 թէ՛ մէկզմէկու հարատուութիւնը փնտռելով եւ հասկնա-  
 լով ամուսնացողները երջանիկ եղած չեն ամենեւին.  
 ուստի ես դարձեալ կը կրկնեմ թէ՛ երիտասարդ մը որ  
 պիտի ամուսնանայ, ամեն բանէ առաջ այնպիսի աղջիկ  
 մը փնտռէ՝ որ կը սիրէ զինքը, եւ առանց երկիւղի  
 պարտի ամուսնանալ նորա հետ:

Տ. Թէ երեսասերտեւեւ գեղեցի աւելի քան եւ-  
 նալու հոճար: Ասիկայ այնպիսի հարցում մի է, որոյ պա-  
 տասխանելու համար՝ մի միայն բնութեան կրնամք դի-  
 վել, եւ անկէց ուսանիլ թէ՛ ամեն երիտասարդ մի եւ  
 նոյն աղջկան գեղեցիկ չի կրնալ ըսելովնին՝ հարկաւ որ  
 եւ իցէ աղջիկ մը չի կրնար ամեն երիտասարդներէն  
 միանգամայն գեղեցիկ տեսնուիլ, ուստի սակէց կը հե-  
 տեւի թէ՛ ամեն աղջիկ գեղեցիկ են, սակայն մէկը իմ  
 աչքիս գեղեցիկ կ'երեւայ, ուրիշ մը քեզի, եւ մէկ ու-  
 րիշն ալ ուրիշի մը. եւ շատ անգամ փորձը յայտնած է  
 թէ՛ մէկ երիտասարդի մը աչքին գեղեցիկ երեւցող  
 աղջիկ մը ուրիշ երիտասարդի մը աչքին տգեղ կ'երե-  
 ւայ, արդ՝ իրողութիւնը քանի որ այսպէս է, առանց  
 բնականի դէմ խօսած լինելու կրնամք ըսել թէ՛ երի-  
 տասարդ մը այն աղջկան հետ ամուսնանալու է, որ  
 իւր աչքին գեղեցիկ կ'երեւնայ, միայն թէ մեծ զգու-  
 շութիւն բանեցնելու է որ՝ գեղեցկութիւնը շինծու չի  
 լինի . . . սպտանայէ մը աւելի տգեղ են այն աղջիկ-

ները՝ որ արհեստական միջոցներու կը դիմեն դեղեցիկ երեւնալու համար :

Բոլոր ասոնցմէ ետքը հարցում մի ալ կը մնայ , այս ինքն՝

6 . Թէ՛ եւէր աստուծոյն երեւելու որոշեալ են այն աղջիկները , որոնք հասարակ , սիրող , համբերող եւ գոհ ամուսին կրնան լինել : Յիրաւի այս հարցման կը փափաքէի որ պատասխանէի եւ լիով կերպով բացատրէի այն ամեն արտաքին երեւոյթները եւ հանգամանքները , որոնցմով ամուսնային կարելի է հաւատարիմ , սիրող , համբերող եւ գոհ ամուսին լինող աղջիկը՝ անհաւատարիմ , շուտով պաղտոյ , անհամբեր եւ դժգոհ ամուսին լինողէն որոշել . սակայն երկու մեծ պատճառներ կ'արդիւեն զիս այս պիտի գիտութիւն մը առ այժմ հրատարակելէն :

Նախ . ինչու որ մեծ գայթակղութիւններ եւ կռիւներ կրնայ ծագիլ շատ ընտանիքներու մէջ :

Երկրորդ . որովհետեւ շատ ասպացուցուած է թէ՛ աղջիկ մը որ իմ ամուսինն լինելով հաւատարիմ , յարատեւ սիրող , համբերող եւ գոհ կը լինի , ուրիշի մը ամուսին լինելով անհաւատարիմ , պաղտոյ , անհամբեր եւ դժգոհ կը լինի , եւ թէ ամեն երիտասարդի բնական կազմուածքին յարմար պէտք է ամուսին լինելու աղջիկը որոշել : Ուստի ասկից յայտնի կ'երեւայ թէ՛ որքան բազմահատոր գիրք մը պէտք է հրատարակել այս խնդիրը պարզապէս լուծելու եւ յայտնելու համար :

Ահա այս երկու պատճառներով զանց կ'ընեմք այս մասին հրատարակմամբ պատասխանելէն , միայն թէ կը խոստանամք որ՝ ով որ կ'ուզէ այս մասին մեր հրատարակածը ընդունիլ , կրնայ բանիւ ստանալ :

Ահաւասիկ լմնցաւ մեր այս փոքրիկ աշխատասիրութիւնը , որ սրտերնուս Հայ երիտասարդութեան վրայ զգացած ջաւին պատճառաւ միայն կը հրատարակեմք , եւ յիրաւի թէ որ միայն մէկ երիտասարդի մը բարեւաւութեանը եւ երջանկութեանը պատճառ լինի այս

աշխատութիւնը՝ ես իմ վարձքս առած կը լինիմ . եւ  
 ալ ամենեւին հոգ չեմ ըներ բոլոր այն տարածայնու  
 թիւնները որոնց շատ հաւանական է որ ենթակայ մը  
 պիտի լինիմ ես . . . ինչ զարմանալի է մարդկային ըն  
 կերութիւնը , նա որ կը պարծենայ իբրեւ արարածոց զե  
 րագոյնը՝ կը խոնարհի սովորութեան առջեւ , եւ իւր բա  
 րելաւութեանը համար աշխատող մէկ անդամը փոխա  
 նակ խրախուսելու եւ քաջալերելու կը նախատէ եւ կը  
 վշտացընէ . բայց հոգ չէ , մենք որ շատ աղէկ գիտեմք  
 թէ մեր առաջին պարտականութիւնն է մարդկային ըն  
 կերութեան բարեացն համար աշխատիլ , պատրաստ  
 եմք համբերել ամեն նախատինքներու , միայն թէ օգ  
 տակար լինիմք եւ պատասխանատու չի մնամք բնու  
 թեան : Արդեօք ներելի է ինձ ազաչել ամեն այն աղ  
 գայնոց որոնք մենէ շատ աւելի տեղեկութիւններ եւ  
 միանգամայն տաղանդ ունին այս տեարակիս նպատա  
 կին վրայ՝ որ բարեհաճին ձայն բարձրացնել Հայ երի  
 տասարդներուն , 'ի սէրն Հայութեան , մարդկութեան  
 եւ քրիստոնէութեան , եւ շատ աւելի բացայայտ եւ  
 զօրաւոր կերպով իմացնեն նոցա թէ ինչ վտանգներու  
 ենթակայ են , քանի որ շարունակեն իւրեանց արդի հեշ  
 տական ընթացքը բոլորովին բնութեան պահանջածին  
 հակառակ :

## ՀԵՂԻՆԱԿԻՆ ՈՒՐԻՇ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- 1 . Հիրսիլիա ողբերգութիւն
- 2 . Կատարին »
- 3 . Երնչակ »
- 4 . Արայ գեղեցիկ »
- 5 . Անճէլինա »
- 6 . Ողխապիադա »
- 7 . Թուրֆանտա Տիկին
- 8 . Պղատուն 'ի Վոսբոր 2 տետրակ
- 9 . Բնական խնամաշտարութիւն մարց
- 10 . Եունկի չորս գիշերները
- 11 . Էլիզա
- 12 . Սիրահարաց բարեկամ

